

1773

2009



Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆԱԽԱԿՆԵՐ ՀԵՌՎԻՑ

3K23

2-28

ՔԱՂԱՔԱՆԱՆ ԴՐԱՆԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

30 MAY 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

174 NOV 2009

3K23

Հ-28

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԵՌՎԻՑ

ՀԵՐ  
ՍԻ

ԴԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՊԵՏՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1940



11 SEP 1913

11 SEP 2013



В. И. ЛЕНИИ

ПИСЬМА ИЗ ДАЛЕКА

Государственное издательство политической литературы  
Ереван • 1940

1773

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԵՌՎԻՑ<sup>1</sup>

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՏԱՊԸ

Առաջին հեղափոխությունը, Վորը ծնվել է համաշխարհային իմպերիալիստական պատերազմից, բռնկվեց: Այդ առաջին հեղափոխությունն, անշուշտ, վերջինը չի լինի:

Այդ առաջին հեղափոխությունն, այն է՝ 1917 թվի մարտի 1-ի ռուսական հեղափոխության առաջին ետապը, դատելով Շվեյցարիայում այս տողերը գրողի տրամադրության տակ յեղած աղքատիկ տվյալներով, ավարտվեց: Այդ առաջին ետապն, անշուշտ, մեր հեղափոխության վերջին ետապը չի լինի:

Ինչպե՞ս կարող եր պատահել այդպիսի «հրաշք», Վոր ընդամենը 8 որում—պ. Միլյուկովի կողմից Ռուսաստանի բոլոր արտասահմանյան ներկայացուցիչներին ուղղված պարծենկոտ հեռադրում հիշված այդ ժամանակամիջոցում—կործանվեց այն միապետությունը, Վոր դիմացել եր դարեր շարունակ և 1905—1907 թ. թ. մեծագույն, համաթողովրդական դատակարգային մարտերի յերեք տարիների ընթացքում դիմացել եր, չնայած Վոչ մի բանի:

Բնության և պատմության մեջ հրաշքներ չեն լինում, սակայն պատմության յուրաքանչյուր շեշտակի շրջադարձ, այդ թվում և յուրաքանչյուր հեղափոխություն, այնպիսի

<sup>1</sup> «Նամակներ հեռվից»-ը գրել է Լենինը Շվեյցարիայում 1917 թվի մարտի 7-ի և 26-ի միջև: 1917 թվին տպագրվել է միայն «Առաջին հեղափոխության առաջին ետապը» վերնագրերը կրող առաջին նամակը «Правда»-յի №№ 14 և 15-ում 1917 թվի մարտի 21—22-ին: Խմբ.:



Հարուստ բովանդակութիւնն և տալիս, կռիւղ կողմերի ուժերի փոխհարաբերութեան և պայքարի ձևերի այնպիսի անսպասելի-յուրահաստուկ համադրութիւնն և ծավալում, վոր քաղքենու բանականութեանը չատ բան պետք և հրաշք թիւա:

Վորպէսզի ցարական միապետութիւնը միջանի որով մեջ կործանակել կարողանար, անհրաժեշտ եր համաշխարհային-սլաւոմական կարեւորութիւն ունեցող մի ամբողջ շարք սլաւոնների զուգադրութիւն: Մատնանշենք դրանցից գլխավորները:

Առանց ռուսական սրբաշնորհատի 1905—1907 թ. թ. մեծագույն դասակարգային մարտերի յերեք տարիների և հեղափոխական հենքիայի՝ անհնարին կլինէր այնքան արագ, — արագ նրա սկզբնական ետապի ավարտման իմաստով, — միջանի որում կատարված, յերկրորդ հեղափոխութիւնը: Առաջինը (1905 թ.) խորը փորեց հողը, արմատախիլ արեց դարավոր նախապաշարումները, զարթեցրեց քաղաքական կյանքի և քաղաքական պայքարի համար միլիոնավոր բանվորների և տասնյակ-միլիոնավոր գյուղացիների, փոխադարձաբար միմյանց — և ամբողջ աշխարհին — ցույց տվեց ռուս հասարակութեան բոլոր դասակարգերին (և բոլոր գլխավոր կուսակցութիւններին)՝ նրանց իսկական բնութեամբ, նրանց շահերի, նրանց ուժերի, նրանց գործողութեան յեղանակների, նրանց մերձավոր ու հեռավոր նպատակների իսկական փոխհարաբերութեամբ: Առաջին հեղափոխութիւնը և նրան հաջորդող հակահեղափոխական ժամանակաշրջանը (1907—1914) մերկացրեց ցարական միապետութեան ամբողջ ելութիւնը, հասցրեց նրան «վերջին սահմանագծին», բացահայտեց նրա ամբողջ փտածութիւնը, նողկալիութիւնը, հրեշավոր Ռասպուտինի գլխավորած ցարական փոհմակի ամբողջ ցինիզմն ու ապականութիւնը, բոլոր դադանութիւնները Ռումանովների ընտանիքի, — այդ ջարդարարների, վորոնք վողողել են Ռուսաստանը հրեաների, բանվորների, հեղափոխականների արյունով, — այդ «հավասարների մեջ առաջին» կալվածատերերի, վորոնք տի-

րում են միլիոնավոր դեպատին հող և վորոնք դիմում եյին տանն տեսակ դադանութեան, ամեն տեսակ վոհրադործութեան, քայքայում ու խեղդում եյին ցանկացած թիւով քաղաքացիներ՝ իրենց և իրենց դասակարգի այդ «սրբազան սկիականութիւնը» պահպանելու համար:

Առանց 1905—1907 թ. թ. հեղափոխութեան, առանց 1907—1914 թիւերի հակահեղափոխութեան անհնարին կլինէր ռուս ժողովրդի և Ռուսաստանում բնակվող ազգերի բոլոր դասակարգերի այդպիսի ճշտորոշ «ինքնորոշումը», այդ դասակարգերի միմյանց և դեպի ցարական միապետութիւնը ցուցաբերելիք վերաբերմունքի վորոշումը, — վերաբերմունք, վոր դրսևորվեց 1917 թ. փետրվար-մարտյան հեղափոխութեան 8 որում: Այդ ութորդ հեղափոխութիւնը, յեթի թույլատրելի յե այսպես այլաբանորեն արտահայտվել, «խաղացվեց» կարծես տասնյակ գլխավոր ու յերկրորդական փորձերից հետո, «դերասանները» ճանաչում եյին միմյանց, դիտեյին իրենց դերերը, իրենց տեղերը, իրենց իրադրութիւնն ըստ ումեայի, տակվետակ (наквозь) մինչև քաղաքական ուղղութիւնների և գործողութեան յեղանակներին ամեն մի քիչ թե չատ նշանակալից յերանդը:

Բայց յեթե 1905 թ. առաջին, մեծ հեղափոխութիւնը, վորը պարոնայք Գուչկովների ու Միլյուկովների և նրանց արքայականների կողմից դատապարտվեց վորպես «մեծ խռովութիւն», 12 տարի հետո հասցրեց 1917 թ. «փայլուն», «սրանծալի հեղափոխութեան», վորը Գուչկովներն ու Միլյուկովները հայտարարում են «սրանծալի», վորովհետև այդ հեղափոխութիւնը նրանց (առայժմ) իշխանութիւն տվեց, — ապա անհրաժեշտ եր նաև մի մեծ, հզոր, ամենուկարող «ոսեփայլ», վորը, մի կողմից, ի վիճակի լինէր հսկայական չափով արագացնելու համաշխարհային սլաւոմութեան ընթացքը, իսկ մյուս կողմից — ծաղեցնելու չտեսնված ուժղնութեամբ համաշխարհային ճգնաժամեր՝ տրնտեսական, քաղաքական, ազգային և միջազգային: Բացի համաշխարհային սլաւոմութեան արտասովոր արագացումից, հարկավոր եյին այդ սլաւոմութեան առանձնապես չեշտակի



չըջադարձեր, վորպեսզի այդ չըջադարձերից մեկնումեկում Թումանովների միապետութան՝ արյունով ու ցեխով չաղակամ սայլը կարողանար մեկ անգամից շուռ գալ:

Այդ ամենակարող «ուժեղությունը», պատմության ընթացքն արագացնող այդ հզոր ուժը հանդիսացավ համաշխարհային իմպերիալիստական պատերազմը:

Այժմ արդեն անվիճելի յե, վոր այդ պատերազմը համաշխարհային ե, քանի վոր Միացյալ Նահանգներն ու Զինատանը կիսով չափ ներգրավված են նրա մեջ այսօր, լիսվին կենդանավիճակի վաղը:

Այժմ արդեն անվիճելի յե, վոր այդ պատերազմն իմպերիալիստական ե յերկու կողմից ել: Միայն կապիտալիստներն ու նրանց արբանյակները, — սոցիալ-հայրենասերներն ու սոցիալ-չոլիկիստները, — կարող են ժխտել կամ քողարկել այդ վստահ: Պատերազմը մղում ե քե՛զերմանական, քե՛զանգլո-ֆրանսական բուրժուազիան ոտար յերկրներ կողոպտելու համար, փոքր ժողովուրդներին խեղդելու, աշխարհի վրա ֆինանսապետ իշխելու, դադուլթները բաժանելու ե վերաբաժանելու համար, կործանվող կապիտալիստական հասարակարգը՝ դանազան յերկրներին բանվորներին հիմարացնելու ե իրարից բաժանելու միջոցով փրկելու համար:

Իմպերիալիստական պատերազմն օրյեկտիվ անխուսափելիութամբ պետք ե չափազանց արագացներ ե չտեսնված չափով սրեր պրոլետարիատի դասակարգային կռիվն ընդդեմ բուրժուազիայի, պետք ե վերածվել քաղաքացիական պատերազմի՝ թշնամի դասակարգերի միջև:

Այդ վերածումն սկսվել ե 1917 թ. փետրվար-մարտյան հեղափոխութամբ, վորի առաջին ետապը ցույց տվեց մեզ, նախ՝ միատեղ հարված ցարիզմին, վոր հասցրին յերկու ուժեր — ամբողջ բուրժուական ե կալվածատիրական Ռուսաստանն՝ իր բոլոր անդիտակից արբանյակներին ու բոլոր դիտակից ղեկավարների հետ միասին՝ հանձին անդլո-ֆրանսական ղեկավարներին ու կապիտալիստներին, մեկ կող-

մից, ե Բանվորների ու Զինվորների Դեպուտատների հարկուրդների՝ մյուս կողմից:

Այդ յերեք քաղաքական բանակները, յերեք հիմնական քաղաքական ուժերն են՝ 1) ցարական միապետութունը — ճորտատեր-կալվածատերերի պարագլուխը, հին չինովնիկության ու ղեներալիտետի պարագլուխը. 2) բուրժուական ե կալվածատիրական ոկտյարրիստական-կադետական Ռուսաստանը, վորի հետեից քարշ եր դալիս մանր բուրժուազիան. 3) Բանվորների ու Զինվորների Դեպուտատների կորհուրդը, վորն իրեն դաշնակիցներ ե փնտում ամբողջ պրոլետարիատի ու ամենաչքավոր բնակչության ամբողջ մասսայի մեջ. — այս յերեք հիմնական քաղաքական ուժերն ամենալիվ պարզությամբ դրսևորեցին իրենց նույնիսկ «առաջին ետապի» 8 օրվա ընթացքում, նույնիսկ ղեպերից ախպես հեռու դտնվող, ակամայից արտասահմանյան թերթերի ազդատիկ հեռադրերով բավարարվող մի դիտողի համար, ինչպես տողերիս դրողն ե:

Բայց նախքան այս առթիվ ավելի մանրամասն խոսելը, յես պետք ե վերադառնամ նամակիս այն մասին, վորը նվիրված ե ամենաառաջնակարգ ուժ հանդիսացող ֆակտորին — համաշխարհային իմպերիալիստական պատերազմին:

Պատերազմը յերկաքե շղթաներով միմյանց հետ կապեց պատերազմող պետութուններին, կապիտալիստների պատերազմող իմբերին, կապիտալիստական կարգերի «տերերին», կապիտալիստական ստրկության ստրկատերերին: Արյունոտ մի գունդ — ահա թե ինչ ե մեր ապրած պատմական մոմենտի հասարակական-քաղաքական կյանքը:

Պատերազմի սկզբում բուրժուազիայի կողմն անցած սոցիալիստները, այդ բոլոր Դավիդներն ու Շայդեմանները՝ Դերմանիայում, Պլեխանովները, Պոտրեսովները, Դվոզդովներն ու Ընկ.՝ Ռուսաստանում, յերկար ժամանակ ե իրենց ամբողջ կոկորդով բղավում եին հեղափոխականների «պատրանքների» դեմ, Բադելի մանիֆեստի «պատրանքների» դեմ, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու «ցնորք-ֆարսի» դեմ: Նրանք ամեն կերպ



զովերդում եյին այն ուժը, կենսունակությունն ու հարմարվողականությունը, վոր իբր թե յերևան եր հանել կապիտալիզմը,—նրանք, ովքեր ոգնեցին կապիտալիստներին «հարմարեցնելու», ընտելացնելու, հիմարացնելու, իրարից բաժանելու զանազան յերկրների բանվոր դասակարգերին:

Բայց «լավ ե ծիծաղում նա, ով վերջինն ե ծիծաղում»: Բուրժուազիային կարճ ժամանակով հաջողվեց հետաձգել պատերազմի ծնած հեղափոխական ճգնաժամը: Այդ ճգնաժամն անգուսպ թափով աճում ե բոլոր յերկրներում, սկըսած Գերմանիայից, վորը վերջերս այդ յերկիրն այցելած մի ղիտողի արտահայտության համաձայն՝ «հանճարեղ կերպով կազմակերպված սով» ե ասլում, մինչև Անգլիան ու Ֆրանսիան, վորտեղ սովը նույնպես մոտենում ե և վորտեղ այն շատ ավելի պակաս «հանճարեղ» ե կազմակերպված:

Բնական ե, վոր ցարական Ռուսաստանում, վորտեղ կաղճալուծումն ամենահրեշտիոր չափի յե հասել, և վորտեղ պրոլետարիատն ամենահեղափոխականն ե (վո՛չ թե չնորհիվ նրա առանձին հատկությունների, այլ չնորհիվ «հինգ թվականի» կենդանի տրադիցիաների),—հեղափոխական ճգնաժամը բռնկվեց ամենից շուտ: Այդ ճգնաժամն արագացավ չնորհիվ մի շարք ամենածանր պարտությունների, վոր կրեցին Ռուսաստանն ու նրա դաշնակիցները: Պարտությունները սասանեցին վողջ հին կառավարական մեխանիզմը և ամբողջ հին կարգը, այդ կարգի դեմ դայրոյթով լցրին բնակչության բոլոր դասակարգերին, դադաղեցրին բանակը, հսկայական չափերով բնաջնջեցին նրա հին հրամանատարական կազմը, վորն ուներ քարացած—ազնվական և առանձնապես նեխած չինովնիկական բնույթ, այն փոխարինեցին յերիտասարդ, թարմ, առավելապես բուրժուական, այլատարր (разночинский) մանր—բուրժուական կազմով:

Բայց յեթե պատերազմում կրած պարտությունները իրողացին բացասական գործոնի դեր, վորն արագացրեց պայթյունը, ապա անդլո—ֆրանսական ֆինանսական կապիտալի, անդլո—ֆրանսական իմպերիալիզմի կապը Ռուսաստ-

անի ոկայաբրիտ—կադետական կապիտալի հետ հանդիսացավ այդ ճգնաժամն արագացնող գործոն:

Գործի այս չափազանց կարևոր կողմը, հասկանալի պատճառներով, լուության ե տալիս անդլո—ֆրանսական մամուլը և չարախնդորեն ընդգծում ե դերմանական մամուլը: Մենք, մարքսիստներս, պետք ե զգաստ նայենք ճշմարտության յերեսին, չչիտթվելով վո՛չ կաղյոննի ստից, իմպերիալիստների առաջին պատերազմող խմբի ղիվանաղետների ու մինիստրների քաղցրավուն—ղիվանաղետական ստից, վո՛չ մյուս պատերազմող խմբին պատկանող՝ նրանց ֆինանսական ու ռազմական կոնկուրենտների աչքով անելուց և հոհուցից: Փեարլամ—մարտյան հեղափոխության դեպքերի ամբողջ ընթացքը սրբող ցույց ե տալիս, վոր անդլիսկան և ֆրանսական դեսպանություններն իրենց գործակալներով ու «կապերով», վորոնք վաղուց ամենահուսահատական ջանքեր եյին դրոժ դնում խանդարելու Նիկոլայ II—ի և Վիլհելմ II—ի միջև «սեպարատ» համաձայնություններն ու սեպարատ հաշտությունը (բայց հուսանք և ջանանք հասնել դրան—այդ վերջինին), անմիջականորեն աշխատում եյին Նիկոլայ Ռոմանովին փոխարինել մեկ ուրիշով:

Պատրանքներ չստեղծենք մեզ համար:

Յեթե հեղափոխությունը հաղթեց այդպես շուտ և այդպես—արտաքուստ, առաջին մակերեսային հայացքից—«արմատականորեն», ապա միայն այն պատճառով, վոր չափազանց յուրորինակ պատմական թիտուացիայի չնորհիվ ձուլվեցին միմյանց, և զարմանալի «համերաշխ կերպով», ձուլվեցին բոլորովին տարբեր հոսանքներ, բոլորովին տարբեր տեսակի դասակարգային շահեր, բոլորովին հակադիր քաղաքական ու սոցիալական ձգտումներ: Այն ե՝ անդլո—ֆրանսական իմպերիալիստների դավադրությունը, վորոնք զբոգում եյին Մեյլոպոլին և Գուչկովին իրենց կոմպանիայի հետ միտտեղ դրավելու իշխանությունը իմպերիալիստական պատերազմը շարունակելու համար, այդ պատերազմն ե՛լ ավելի կատաղի ու համառ մղելու համար, Ռուսաստանի բանվորների ու զյուզացիների նոր միլիոններ կո-



տարեխու համար, վերապահի կոստանդնուպոլիսն ստանան... Գուլգուլները, Միրիան... Ֆրանսական կապիտալիստները, Միջազգային... անգլիական կապիտալիստները, և այլն: Այս մի կողմից: Իսկ մյուս կողմից—սլոնիստարական և մասսայական—ժողովրդական (քաղաքները և գյուղերը) ամբողջ ամենաչքավոր բնակչությունը) հեղափոխական բնույթ կրող շարժումը հանուն հացի, հանուն խաղաղության, հանուն իսկական ազատության:

Հեղափոխական բանվորներն ու զինվորները հիմնովին կործանեցին նոգկալի ցարական միապետությունը, չհրճվելով և չփոթվելով այն բանից, վոր վորոշ, կարճատև, ըստ կոնյունկտուրայի բացառիկ պատմական մոմենտներում նրանց ռզմության և դալիս Բյուկենենի, Գուլգուլի և Միլյուկովի ու Ընկ. պայքարը, վորոնք ցանկանում էին միայն մի միապետին փոխարինել մեկ ուրիշով:

Այսպես և միայն այսպես եր բանը: Այսպես և միայն այսպես կարող ե նայել այն քաղաքացիները, վոր չի վախենում ճշմարտությունից, աչալընրեն կռուում և հասարակական ուժերի հարաբերությունը հեղափոխության մեջ, յուրաքանչյուր «ընթացիկ մոմենտ» գնահատում և վո՛չ միայն նրա ամբողջ տվյալ, այսօրվա յուրորինակություն տեսակետից, այլև ավելի խոր դասականների, ինչպես Ռուսաստանի, այնպես ել ամբողջ աշխարհի սլոնիստարիստի ու բուրժուազիայի շահերի ավելի խոր փոխհարաբերություն տեսակետից:

Պիտերի բանվորներն ու զինվորները, ինչպես և ամբողջ Ռուսաստանի բանվորներն ու զինվորները, անձնազուհարար կռվում էին ցարական միապետության դեմ, հանուն ազատության, հանուն հողը դուռդացիներին տալու, իմպերիալիստական սպանդի փոխարեն խաղաղություն հաստատելու համար: Անգլո-ֆրանսական իմպերիալիստական կապիտալը, այդ սպանդը շարունակելու և ուժեղացնելու նպատակով, պալատական ինտրիգներ եր կռվում, դավադրություն եր սարքում, դրդում և հուսադրում եր Գուլգուլներին ու Միլյուկովներին, ծածուկ կաղձակե-

րում եր բոլորովին պատրաստ նոր կառավարություն, վորը և իշխանությունն իր ձեռքը գցեց սլոնիստարիստն պայքարի՝ ցարիզմին հասցրած առաջին իսկ հարվածներից հետո:

Այդ կառավարությունը պատահական մարդկանց մի հավաքույթ է:

Այդ—նոր դասակարգի ներկայացուցիչներն են, մի դասակարգի, վոր Ռուսաստանում քաղաքական իշխանության ե բարձրացել, կապիտալիստ կալվածատերերի և բուրժուազիայի դասակարգի, վորը վաղուց կառավարում ե մեր յերկիրը անտեսապես և վորը, ինչպես 1905—1907 թ. թ. հեղափոխության, այնպես ել 1907—1914 թ. թ. հակահեղափոխության ժամանակ, ու վերջապես,—և այն ել առանձին արագությունով,—1914—1917 թ. թ. պատերազմի ժամանակ չափազանց արագ կաղձակեցվեց. քաղաքականապես, իր ձեռքը վերցնելով թե՛ տեղական ինքնավարությունը, թե՛ ժողովրդական կրթությունը, թե՛ դասազան տեսակ համագումարներ, թե՛ Դուման, թե՛ ռազմարդյունաբերական կոմիտեները և այլն: Այդ նոր դասակարգը «համարյա բոլորովին» արդեն իշխանության տեր եր 1917 թ. մոտերքը, ուստի և բախական էին ցարիզմին հասցրած առաջին հարվածները, վորապեսդի նա կործանվեց, տեղ մաքրելով բուրժուազիայի համար: Իմպերիալիստական պատերազմը, ուժերի աներևակայելի լարում պահանջելով, այնպես արագացրեց հետամնաց Ռուսաստանի դարդացման ընթացքը, վոր մենք «միանգամից» (իրականում՝ կարծես քե միանգամից) հասանք Իտալիային, Անգլիային, համարյա Ֆրանսիային, ստացանք «կոալիցիոն», «ազգային» (այսինքն՝ իմպերիալիստական սպանդի դործը վարելու և ժողովրդին խաբելու հարմարեցրած) «պառլամենտական» կառավարություն:

Այդ կառավարության,—եյապես, տվյալ պատերազմի տեսակետով, միլիարդատեր «Անգլիա և Ֆրանսիա» «Ֆիրմաների» հոտարակ դործակալատերի,—կողքին ծնունդ առավ նոր, վո՛չ սրաշտոնական, չգարգացած, դեռ համեմատաբար



թույլ բանվորական կառավարութիւնը, վորն արտահայտուած է պրոլետարիատի և քաղաքային ու գյուղական բնակչութեան ամբողջ ամենաջգամոր մասի շահերը: Դա Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհուրդն է Պիեթրում:

Այս է իրական քաղաքական դրութիւնը, վորը մենք ամենից առաջ պետք է աշխատենք բնորոշել առավելագոյն հնարավոր որոշելով ճշտորոշութեամբ, վորպէսզի մարքսիստական տակտիկան հիմնենք այն միակ ամուր պատգանդների վրա, վորի վրա նա պետք է հիմնվի,—փաստերի հիմքի վրա:

Յարական միապետութիւնը ջախջախւած է, բայց դեռ վրէժնացւած չէ:

Ոկտյաբրիստական—կադետական, բուրժուական կառավարութիւնը, վոր ուզում է իմպերիալիստական պատերազմը մղել «մինչև վերջ», իրականում «Անգլիա և Ֆրանսիա» Ֆինանսական Ֆիրմայի գործակատարն է, վոր հարկադրւած է խոստանալ ժողովրդին՝ ազատութիւնների ու փրկութեան մասին, վորոնք համատեղելի լինեն այն բանին, վոր այդ կառավարութիւնը պահպանի իր իշխանութիւնը ժողովրդի վրա և հնարավորութիւն ունենա շարունակելու իմպերիալիստական սպանդը:

Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհուրդը բանվորական կառավարութեան սաղմն է, բնակչութեան բոլոր ամենաշգմալոր մասանների, այսինքն՝ բնակչութեան ինքն առանձնորդական մասի շահերի ներկայացուցիչը, բնակչութիւն, վոր ձգտում է ձեռք բերել խաղաղութիւն, հաց, ազատութիւն:

Այդ յերեք ուժերի պայքարը բնորոշում է այն դրութիւնը, վոր այժմ ստեղծվել է և վոր հեղափոխութեան առաջին ետապից դեպի յերկրորդը տանող անցման ետապ է հանդիսանում:

Յարական միապետութեան դեմ իրական պայքար մղելու, ազատութիւնը վրէժ միայն խոսքով, վրէժ թե լիբերալիզմի ճոռմաբանների խոստումներով, այլ իրական ապա-

հովելու համար վրէժ քե բանվորները պետք է պաշտպանեն նոր կառավարութիւնը, այլ այդ կառավարութիւնը պետք է «պաշտպանի» բանվորներին: Վորովհետև ցարիզմը մինչև վերջը խորտակելու և ազատութեան միակ յերաշխիքը պրոլետարիատի զինումն է, Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհուրդի դերի, նշանակութեան, ուժի ամբարնդումը, բնդարձակումն ու զարգացումը:

Մնացած բոլորը—Ֆրագ է և ստութիւն, լիբերալ և ուղիկալ բանակի պրոլետիկանների ինքնախաբեկութիւն:

Ոգնեցե՛ք բանվորների զինմանը կամ դեթ մի՛ խանդարեք այդ դործը,—և ազատութիւնը Ռուսաստանում անպարտիկ կլինի, միապետութիւնն անվերականգնելի, հանրապետութիւնն ասպահովւած:

Այլապես՝ ժողովուրդը խաբւած կլինի: Խոստումներն և ժառն են: Խոստումները վրէժն չարժեն: Խոստումներով ելին «կերակրում» ժողովրդին և հիմարացնում բանվորներին բոլոր բուրժուական պրոլետիկանները բոլոր բուրժուական հեղափոխութիւնների ժամանակ:

Մեր հեղափոխութիւնը բուրժուական է, ուստի բանվորները պետք է պաշտպանեն բուրժուազիային,—ասում են լիկվիդատորների բանակին պատկանող բոլորովին անպետք քաղաքագետները:

Մեր հեղափոխութիւնը բուրժուական է,—ասում ենք մենք, մարքսիստներս,—ուստի բանվորները պետք է բաց անեն ժողովրդի աչքը բուրժուական պրոլետիկանների խաբեալութեան նկատմամբ, սովորեցնեն նրան չհավատալ խոսքերին, ազալինել միայն իր ուժերին, իր կազմակերպութեանը, իր միավորմանը, իր սպառազինմանը:

Ոկտյաբրիստների ու կադետների, Գուչկովների ու Միլյուկովների կառավարութիւնը չի կարող,—նույնիսկ յեթե նրանք անկեղծորեն ցանկանային այդ—վրէժ խաղաղութիւն, վրէժ հաց, և վրէժ ել ազատութիւն տալ:

Խաղաղութիւն—այն պատճառով, վորովհետև նա պատերազմի կառավարութիւն է, իմպերիալիստական սպանդը շարունակելու կառավարութիւն, գալիքւան կառավարու-



թյուն, վորը դեռ վոչ մի ծպտունով չի հրաժարվել Հայաստանը, Գալլիցիան, Թյուրքիան դավթելու, Կոստանդնուպոլիսը խելու, Լեհաստանը, Կուրլանդիան, Լիտվական յերկիրը և այլն նորից նվաճելու ցարական քաղաքականությունից: Այդ կառավարության ձեռքն ու վորքը կապել, կաշկանդել և անդու-Ֆրանսական իմպերիալիստական կապիտալը: Ռուսական կապիտալը միայն մի բաժանմունք և այն համաշխարհային «Ֆիրմայի», վոր խաղում և հարյուրավոր միլիարդ ուրբլիների հետ և կրում և «Անգլիա և Ֆրանսիա» անունը:

Հայց—այն պատճառով, վորովհետև դա բուրժուական կառավարություն և: Լավագույնը դեպքում նա կտա ժողովրդին, ինչպես տվեց Գերմանիան, «հանձարեղ կերպով կազմակերպված սով»: Բայց ժողովուրդը սով չի հանդուրժի: Ժողովուրդը կիմանա և, հավանաբար, չուտով կիմանա, վոր հաց կա և կարող և ստացվել, բայց վոչ այլ կերպ, յեթե վոչ այնպիսի միջոցների կիրառումով, վորոնք չեն խոնարհվի կապիտալի և հողատիրության սրբության առաջ:

Ազատություն—այն պատճառով, վորովհետև դա կալվածատիրական—կապիտալիստական կառավարություն և, վոր վախենում և ժողովրդից:

Այդ կառավարության հանդեպ բռնելիք մեր մոտակա վարքագծի տակալիական խնդիրների մասին մենք կխոսենք ուրիշ հոդվածում: Այնտեղ մենք ցույց կտանք, թե վո՞րն և ին՞չպիսի մոմենտի—հեղափոխության առաջին ետապից դեպի յերկրորդը տանող անցման յուրորինակությունը, թե ինչո՞ւ այդ մոմենտում լողունքը, «որվա խնդրը» պետք և լինի՝ բանվորների, դուրս պրոլետարական, ժողովրդական հեղափոխության հրաշքներ գործեցիք ցարիզմի դեմ մղվող ֆալսիֆալսի պատերազմում, դուրս պետք և պրոլետարական և համաժողովրդական կազմակերպության հրաշքներ գործեք, վորպեսզի նախապատրաստեք ձեր հաղթանակը հեղափոխության յերկրորդ ետապում:

Սահմանափակելով այժմ հեղափոխության սովյալ ետապի դասակարգային կռիվի ու դասակարգային ուժերի

փոխհարաբերության վերլուծությունը, մենք պետք և գնենք նաև այսպիսի հարց. ովքե՞ր են պրոլետարիատի զաշխակիցները տվյալ հեղափոխության մեջ:

Նա յերկու դաշակից ունի. առաջին՝ Ռուսաստանի կիսապրոլետարական և, մասամբ, մանր-գյուղացիական բնակչության լայն, շատ տասնյակ միլիոնների հասնող մասսան, վոր բնակչության հսկայական մեծամասնությունն և կազմում: Այդ մասսային անհրաժեշտ են խաղաղություն, հաց, ազատություն, հող: Այդ մասսան անխուսափելիորեն գտնվելու յե բուրժուազիայի և մանավանդ մանր բուրժուազիայի վորոշ աղքեցության տակ, ընդվորում այս վերջինին նա ամենից ավելի մոտ և իր կյանքի պայմաններով՝ տատանվելով բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Պատերազմի դաժան դասերը, վորոնք այնքան ավելի դաժան կլինեն, վորքան Գուչկովները, Լիովները, Միլյուկովներն ու Ընկ. ավելի յեռանդով կշարունակեն պատերազմը, անխուսափելիորեն կհրեն այդ մասսային դեպի պրոլետարիատը, կստիպեն նրան դնալ այդ պրոլետարիատի հետևից: Մենք պետք և այժմ, ոգտվելով նոր կարգերի ազատությունից և Բանվորների ու Զինվորների Դեպուտատների Խորհուրդներից, աշխատենք ամենից առաջ և ամենից շատ լուսավորել ու կազմակերպել այդ մասսան: Գյուղացիական զեպուտատների խորհուրդներ, գյուղատնտեսական բանվորների խորհուրդներ, — ահա ամենակենսական խնդիրներից մեկը: Ընդամեն մեր ձգտումը պետք և լինի վո՞չ միայն այն, վոր գյուղատնտեսական բանվորներն ընտրեն իրենց հատուկ խորհուրդները, այլև՝ վորպեսզի չունենոր ու ամենաչքափոր գյուղացիները կազմակերպվեն ունենոր գյուղացիներից առանձին: Ներկայումս կենսականորեն անհրաժեշտ կազմակերպության հատուկ խնդիրների և հատուկ ձևերի մասին—հետևյալ նամակում:

Յերկրորդ՝ ուսական պրոլետարիատի դաշակիցն և բոլոր պատերազմող և առհասարակ բոլոր յերկրների պրոլետարիատը: Նրան այժմ պատերազմը նկատելի չափով ճգմել և, և նրա անունից չափազանց հաճախ են խոսում



նաև Յեզրոսայում, ինչպես Պլեխանովը, Գլոգոյովը, Պոտ-  
բետովը Ռուսաստանում, բուրժուազիայի կողմն անցած սո-  
ցիալ-չովինիստները: Բայց պրոլետարիատի ազատումը  
նրանց ազդեցությունից առաջ եր գնում իմպերիալիստական  
պատերազմի յուրաքանչյուր ամսվա հետ, իսկ ուսական  
հեղափոխությունն անխուսափելիորեն կարագացնի այդ  
պրոցեսը հակայական չափերով:

Այդ յերկու դաշնակիցների հետ Ռուսաստանի պրոլե-  
տարիտը կարող է գնալ և կգնա, ոգտագործելով այժմյան  
անցողիկ մոմենտի առանձնահատկությունները՝ նախ դեպի  
դեմոկրատական հանրապետություն և կալվածատերերի  
նկատմամբ դյուղացիության լիակատար հաղթանակ նվա-  
ճելը, իսկ դրանից հետո—դեպի սոցիալիզմ, վորը միակն է,  
վոր պատերազմից տանջված ժողովուրդներին կտա խաղա-  
ղալքյուն, հաց և ազատություն:

Ն. Լենին

Գրված է 1917 թ. մարտի 20-ին (7-ին):  
Առաջին անգամ տպագրվել է «Правда»-ի  
№№ 14 և 15, 3—4 ապրիլի (21 և 22.մար-  
տի) 1917 թ.:

ՆԱՄԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

## ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

Վրխավոր փաստաթուղթը, վոր կա իմ տրամադրություն  
տակ մինչև այսօր (8/21 մարտի), այդ—անդլիական ամե-  
նապահպանողական և ամենարուբուական «Times» (Թայմզ)  
լրագրի մարտի 16-ի համարն է, Ռուսաստանի հեղափոխու-  
թյան վերաբերյալ հաղորդադրությունների ամփոփումով:  
Պարզ է, վոր դեպի Գուչկովի ու Միլյուկովի կառավարու-  
թյունը, յեթե մեզմ արտահայտվենք, ավելի բարեհաճ կեր-  
պով տրամադրված մի այլ աղբյուր գտնելը հեշտ է:

Այդ թերթի թղթակիցը հաղորդում է Պետերբուրգից  
չորեքշաբթի մարտի 1(14)-ին, յերբ գոյություն ունեւ դեռ  
միայն առաջին ժամանակավոր կառավարությունը, այ-  
սինքն՝ Դումայի 13 հոգուց կազմված Գործադիր Կոմիտեն  
Ռոճյանկոյի գլխավորութամբ և ըստ լրագրի արտահայ-  
տության, «սոցիալիստներ» Կերենսկու և Զխեիձեյի անդա-  
մակցութամբ, —հետեյալը.

«Պետական խորհրդի 22 ընտրովի անդամներից բաղկա-  
ցած մի խումբ՝ Գուչկովը, Ստախովիչը, Տրուբեցկոյը,  
պրոֆեսոր Վասիլյեվը, Գրեմմը, Վերնադսկին և ուրիշ.,  
յերեկ ցարին մի հեռադիր ուղարկեց», աղբյուրով նրան  
«դինաստիան» փրկելու համար և այլն և այլն, գումարել  
Դուման և կառավարության գլուխ նշանակել «ազգի վստա-  
հությունը» վայելող մեկին: «Թե ինչ կվճռի կայսրը, վորն  
այսօր պետք է ժամանի, դեռ տվյալ մոմենտում անհայտ է,  
—դրում է թղթակիցը,—բայց մի բան բոլորովին կասկա-  
ծից դուրս է: Յեթե նորին մեծությունն անհապաղ չբալա-







Իսկ ինչպե՞ս արդարացնել ժողովրդին խաբելը, նրա հիմարացումը, բնակչության վիթխարի մեծամասնության կամքի խախտումը:

Դրա համար հարկավոր է զրպարտել նրան—դա բուրժուազիայի հին, բայց միշտ նոր դործեղածն է: Յեւլ անդլիական դուշմնականը զրպարտում է, հայհոյում, թքում ու փրփրոտում ե՛ «նեքսում անարխիա՝ դրսից կատաստրոֆ», վո՛չ մի «կարգավորված կառավարություն»!!

Սո՛ւտ է, հարգելի դուշմնական: Բանվորները հանրապետություն են ուզում, իսկ հանրապետությունն անհամեմատ ավելի «կարգավորված» կառավարություն է, քան միապետությունը: Ժողովուրդն ինչո՞վ է յերաշխավորված, վոր յերկրորդ Ռոմանովը իր համար մի յերկրորդ միասպուտին չի դտնի: Կատաստրոֆը հենց պատերազմի շարունակությունը, այսինքն՝ հենց նոր կառավարությունն է բերում: Գյուղական բանվորների և դյուղացիների ու քաղաքացիների ամենաչքավոր մասի սրաչտպանած պրոլետարական հանրապետությունը միայն կարող է հաշտությունն ապահովել, հաց, կարգ ու կանոն, ազատություն տալ:

Անարխիայի դեմ ուղղված աղադակները քողարկում են միայն կապիտալիստների ընչաքաղց շահերը, վորոնք ուզում են հարստանալ պատերազմից և ռազմական փոխառություններից, ուզում են վերականգնել միապետությունն ընդդեմ ժողովրդի:

... «Յերեկ,—շարունակում է թղթակիցը,—սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ամենախուժաբար բովանդակությունաբ կոչ բաց թողեց և այդ կոչը տարածվեց ամբողջ քաղաքում: Նրանք» (այսինքն սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը) «գոտորակ դոկտրինյորներ են, բայց նրանց չարիք դործելու իշխանությունը հիմիկվա նման ժամանակներում հսկայական է: Պ. Կերենսկին և պ. Չխեիձեն, վորոնք հասկանում են, վոր առանց սպաների և ժողովրդի ավելի չափավոր տարրերի աջակցության նրանք չեն կարող անարխիայից խուսափելու հույս ունենալ, հարկադրված են հաչվի առնելու իրենց սպակաս խոհեմ ընկեր-

ներին և աննկատելիորեն նրանց մղում են այնպիսի դերք դրավելու, վորը բարդացնում է ժամանակավոր Կոմիտեյի խնդիրը»...

Ո՛ր, մեծ անդլիական դեմանադետ-դուշմնական, ինչպե՞ս «անխոհեմաբար» դուք ձեր բերանից փախցրիք ճշմարտությունը:

«Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը» և «պակաս խոհեմ ընկերները», վորոնց «ստիպված են հաչվի առնել Կերենսկին ու Չխեիձեն», այդ ըստ յերեութին մեր, 1912 թ. հունվարի կոնֆերենցիայում վերականգնված կուսակցության Կենտրոնական կամ Պետերբուրգի կոմիտեն է, հենց այն «բուլչեիկներն» են, վորոնց բուրժուաները շարունակ հայհոյելով՝ «դոկտրինյորներ» են անվանում՝ «դոկտրինային», այսինքն սոցիալիզմի հիմունքներին, սկզբունքներին, ուսմունքին ու նպատակներին հավատարիմ լինելու համար: Ակնհայտ է, վոր անդլիական դուշմնականը խուժվարարական ու դոկտրինյորական բռնեղով հայհոյում է մեր կուսակցության կոչն ու վարմունքը՝ հանուն հանրապետության, հանուն հաշտության, հանուն ցարական միապետությունը լիովին վոչնչացնելու, ժողովրդին հաց տալու նպատակով պայքարելու կոչ անելու համար:

Հաց ժողովրդի համար և հաշտություն—այս խուժարարություն է, իսկ Գուչկովի և Միլյուկովի համար մի-նիստրական աթոռներ՝ այդ «կարգ ու կանոն է»: Հի՛ն, ծանոթ ճառեր:

Իսկ ինչպիսի՞ տակտիկա ունեն Կերենսկին ու Չխեիձեն, ըստ անդլիական դուշմնականի բնութագրման:

Տատանվող տակտիկա. մի կողմից, դուշմնականը դովարանում է նրանց, թե իբր նրանք «հասկանում են» (խեղացի տղանե՛ր, խելոքնե՛ր), վոր առանց սպաների և ավելի չափավոր տարրերի «աջակցության» չի կարելի անարխիայից խուսափել (իսկ մենք մինչև այժմ մտածել ենք և շարունակում ենք մտածել, համաձայն մեր դոկտրինայի, սոցիալիզմի մեր ուսմունքի, թե հենց կապիտալիստներն են մարդկային հասարակության մեջ անարխիա և պատերազմներ



մացնում, թե, միայն ամբողջ քաղաքական իշխանությունը պրոլետարիատի ու ամենաչքավոր ժողովրդի ձեռքն անցնելը կարող է մեզ փրկել պատերազմներից, անարխիայից, սովից)։ Մյուս կողմից՝ իբր թե նրանք «ստիպված են հաշվի առնել» «իրենց պակաս խոհեմ ընկերներին», այսինքն՝ բուլճերիկներին, Կենտրոնական Կոմիտեյի միջոցով վերականգնված և միավորված Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությանը։

Իսկ ի՞նչ ուժ է «հարկադրում» Կերենսկուն և Չխեիձեյին «հաշվի առնել» բուլճերիկյան կուսակցությանը, վորթն նրանք յերբեք չեն պատկանել, վորին նրանք իրենք կամ իրենց գրական ներկայացուցիչները («սոցիալիստ-հեղափոխականները», «ժողովրդական սոցիալիստները», «մենչևիկ-կադմիստականները» և այլն) միշտ հայհոյում եյին, դատապարտում, չնչին ընդհատակյա խմբակ, դոկարինյորներ թի աղանդ եյին հայտարարում և այլն։

Իսկ վո՞րտեղ և յե՞րբ է տեսնված, վոր հեղափոխական ժամանակում, առաջելապես մասսաների գործողության ժամանակ խելքը չկորցրած քաղաքագետները «հաշվի առնեն» «դոկարինյորներին»։

Խճճվել է մեր վոգորմելի անգլիացի գուշկովականը, ծայրը ծայրին չի հասցրել, չի կարողացել վո՞չ ամբողջովին ստել, վո՞չ ել ամբողջովին ճշմարտություն ասել, և միայն մատնել է իրեն։

Կերենսկուն և Չխեիձեյին հարկադրել է հաշվի առնել Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին ա՛յն աղբեցությունը, վոր կուսակցությունն ունի պրոլետարիատի և մասսաների վրա։ Մեր կուսակցությունը մնաց մասսաների հետ, հեղափոխական պրոլետարիատի հետ, չնայած մեր Դեպուտատներին դեռևս 1914 թվին ձերբակալելուն ու Սիբիր աքսորելուն, չնայած այն կատաղի հալածանքներին ու ձերբակալություններին, վորոնց յենթարկվում էր Պետերբուրգի Կոմիտեն պատերազմի ժամանակ, պատերազմի դեմ ու ցարիզմի դեմ կատարած իր անլեզալ աշխատանքի համար։

«Փաստերը—համառ բաներ են», ասում է անգլիական առածը։ Թույլ տվեք այդ առածը հիշեցնել ձեզ, ամենահարգելի անգլիացի գուշկովական։ Հեղափոխության մեծ որերին մեր կուսակցության կողմից Պետերբուրգի բանվորներին ցույց տրված ղեկավարության կամ դոնե անսահման ոգնության փաստը պետք է ընդունել «իմֆն» անգլիացի գուշկովականը։ Կերենսկու և Չխեիձեյի տատանումների փաստը բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև նա նույնպես պետք է ընդունել։ Գվոգդոյովականները, «պաշտպանողականները», այսինքն՝ սոցիալ-չովինիստները, այսինքն՝ իմպերիալիստական, թալանչիական պատերազմի պաշտպաններն այժմ լիովին դնում են բուրժուազիայի հետևից, Կերենսկին, մտնելով մինիստրության մեջ, այսինքն՝ յերկրորդ ժամանակավոր Կառավարության մեջ, նույնպես լիովին բուրժուազիայի կողմն անցավ։ Չխեիձեն չզնաց, նա մնաց վորպես տատանվող մի կողմից բուրժուազիայի ժամանակավոր Կառավարության, Գուշկովների ու Միլյուկովների և, մյուս կողմից, պրոլետարիատի ու ժողովրդի ամենաչքավոր մասսաների «ժամանակավոր Կառավարության», Բանվորների Դեպուտատների Սորհրդի ու Կենտրոնական Կոմիտեյի միավորված՝ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության միջև։

Հետևապես, հեղափոխությունը հաստատեց այն, ինչ մենք առանձնապես պնդում եյինք՝ կոչ անելով բանվորներին վորոչալի ձևով պարզելու բանվորական շարժման և մանր բուրժուազիայի գլխավոր կուսակցությունների ու գլխավոր հոռանքների միջև յեղած դասակարգային տարբերությունը—այն, ինչ մենք գրում եյինք, որինակ, Ժընեի «Социал-Демократ»-ում, № 47, համարյա մեկ ու կես տարի օրանից առաջ, 1915 թ. հոկտեմբերի 13-ին։

«Ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատների մասնակցությունը մենք առաջապես թույլատրելի յենք համարում դեմոկրատական մանր բուրժուազիայի հետ միասին, բայց միայն Վոչ հեղափոխական-չովինիստների հետ։ Հեղափոխական-չովինիստներ ենք



համարում մենք նրանց, ովքեր ձգտում են ցարկովին հաղթել՝ Գերմանիային հաղթելու համար,—ուրիշ յերկրներ թաղանելու համար,—վերլիկոուսներին տիրապետությունը Ռուսաստանի մյուս ժողովուրդների նկատմամբ ամրացնելու համար և այլն։ Հեղափոխական չովինիզմի հիմքը մանր բուրժուազիայի դասակարգային դրությունն է։ Մանր բուրժուազիան միշտ տատանվում է բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև։ Այժմ նա տատանվում է չովինիզմի (վորը նրան խանդարում է հետեղականորեն—հեղափոխական լինել նույնիսկ դեմոկրատական հեղափոխության իմաստով) և պրոլետարական ինտերնացիոնալիզմի միջև։ Ռուսաստանում այդ մանր բուրժուազիայի քաղաքական արտահայտիչներն են ներկա մոմենտում՝ աշխատավորականները, սոցիալիստ-հեղափոխականները, «Наша Заря»-ն (ներկայումս «Дело»-ն) Զխեիձեյի ֆրակցիան, Կադակերպական Կոմիտեն, պ. Պլեխանովը և այլն։ Յեթե Ռուսաստանում հեղափոխական չովինիստները հաղթանակեյին, մենք դեմ կլինեյինք տվյալ պատերազմում նրանց «հայրենիքի» պաշտպանությանը։ Մեր լոզունգն է՝ ընդդեմ չովինիստներին՝ թեկուզ և հեղափոխական ու հանրապետական չովինիստներին, ընդդեմ նրանց և ի պաշտպանությամբ միջազգային պրոլետարիատի դաշինքին՝ սոցիալիստական հեղափոխության համար»։

Սակայն դառնանք անգլիացի դուչկովականին։

... «Պետական Դոմայի Ժամանակավոր Կոմիտեն,—չարունակում է նա,—դնահատելով իր առաջ կանգնած վտանգները, դիտավորյալ կերպով ձեռնպահ մնաց ժինիստներին ձերբակալելու իր սկզբնական պլանի իրադրությունից, թեև յերեկ այդ կարելի յեր նվազագույն դժվարություններով անել։ Այդպիսով, դուռ բացվեց բանակցությունների համար, վորի շնորհիվ մենք» («մենք»—անգլիական ֆինանսական կապիտալը և իմպերիալիզմը) «կարող ենք նոր ուժիմի բոլոր ոգուտներն ստանալ՝ առանց

Կոմունայի սարսափելի փորձության և քաղաքական պատերազմի անարխիայի բովով անցնելու»...

Դուչկովականները կազմակից եյին հոգուտ իրենց մղվող քաղաքացիական պատերազմի, նրանք դեմ են քաղաքացիական պատերազմին հոգուտ ժողովուրդին, այսինքն՝ հոգուտ աշխատավորության խակական մեծամասնության։

... «Այն հարաբերությունները, վորոնք ստեղծվել են մի կողմից Դոմայի Ժամանակավոր Կոմիտեյի միջև, վորը ներկայացնում է ամբողջ ազգը» (այն ել չորրորդ՝ կալվածատիրական ու կապիտալիստական Դոմայի Կոմիտեն) «և Բանվորներին Դեպուտատներին խորհրդին միջև, վորը ներկայացնում է դուռ դասակարգային շահերը» (այն դիվանագետի լեզուն, վորը մի ականջով դիտուն խոսքեր ել ել և ուղում է թաղցնել, վոր Բանվորներին Դեպուտատներին խորհուրդը ներկայացնում է պրոլետարիատին և չքավորությանը, այսինքն՝ բնակչության ինքն տասերորդականը), «բայց այնպիսի կրիզիսի Ժամանակ, ինչպես այժմյանը, հակառակ իշխանություն ունի, այդ հարաբերությունները քիչ յերկյուղ չառաջացրին այն լրջմիտ մարդկանց մեջ, վորոնք նախատեսում են ընդհարման հնարավորությունը մեկի ու մյուսի միջև, ընդհարում, վորի հետևանքները կարող եյին չափազանց սարսափելի լինել։

«Բարեբախտաբար այդ վտանգը վերացվեց—դունե ներկա Ժամանակի համար» (նկատեցեք այս՝ «դո՛ւնե»-ն), «շնորհիվ մեծ հոստորական ընդունակությունների տեր յեւրիտասարդ փաստաբան պ. Կերենսկու ազդեցության, վորը պարզ հասկանում է» (ի տարբերություն, Զխեիձեյի, վորը նույնպես «հասկանում եր», բայց դուչկովականի կարծիքով, յերեկ՝ պակաս պարզորոշությամբ), «վոր անհրաժեշտ է Կոմիտեյի հետ միտին դործել հոգուտ նրա՝ բանվոր դասակարգին պատկանող ընտրողներին» (այսինքն՝ բանվորներին ձայներն ունենալու, նրանց սիրաչահելու համար)։ «Բավարար համաձայնությունը կնքվեց այսօր (չորեքշաբթի 1/14 մարտի), վորի շնորհիվ կողմերը կխուսափեն ամեն տեսակ ավելորդ քաղխումքներից»։



Այդ ինչ համաձայնութունն է յեղել, արդյոք ամբողջ Բանվորների Դեպուտատների Սորհրդի միջև, վորոնք են այդ համաձայնության պայմանները, մենք չգիտենք: Գըլ-խավորի մասին անդլիացի դուշկովականն այս անգամ բու-լորովին լռել է: Դե, իհարկե: Բուրժուազիայի համար ձեռնառն է, վոր այդ պայմանները պարզ, ճշտորոշ, բոլոր-ին հայտնի լինեն,—վորովհետև այդ դեպքում բուրժուա-զիայի համար ավելի դժվար կլինի այդ պայմանները խախ-տելը:

Նախընթաց տողերն արդեն զբաղեցնում էին, յերբ յես յեր-կու, շատ կարևոր հաղորդագրություն կարդացի: Առաջին՝ Փարիզի ամենապահպանողական և ամենաբուրժուական «Le Temps» («Ժամանակ») լրագրի մարտի 20-ի համարում Բանվորների Դեպուտատների Սորհրդի կողմը՝ նոր կառա-վարություն «աջակցելու» մասին, յերկրորդ, Պետական Դու-մայում մարտի 1(14)-ին Սկոբելևի արտասանած ճառի քաղ-վածքները, վոր հաղորդեց Յուլիխի մի լրագիր Neue Züricher Zeitung<sup>1</sup>, 1 Mit.-bl. մարտի 21), Բեռլինի մի լրա-գրի (Nationale Zeitung)<sup>2</sup> հաղորդածի հիման վրա:

Բանվորների Դեպուտատների Սորհրդի կողմը, յեթե նրա տեքստը ֆրանսական իմպերիալիստները չեն աղճատել, մի ամենանշանակալից փաստաթուղթ է, վորը ցույց է տա-լիս, թե Պետերբուրգի պրոլետարիատը, դոնե այդ կողմը լույս ընծայելու մոմենտին, մանր-բուրժուական քաղաքա-դետների գերակշռող ազդեցություն տակ է դնում յես յեղել: Հիշեցնեմ, վոր, ինչպես արդեն վերևում է նշված, յես այդ տեսակ քաղաքադետների շարքն եմ դասում Կերենսկու և Զիսինձեյի տիպի մարդկանց:

Կոչի մեջ քաղաքական յերկու գաղափար և դրա համե-մատ հետևյալ յերկու լոզունգն ենք գտնում.

Առաջին: Կոչն ասում է, վոր կառավարությունը (նոր)

<sup>1</sup> «Նոր Յուլիխյան լրագիր»: Խմբ.:

<sup>2</sup> — «Ազգային լրագիր»: Խմբ.:

բաղկացած է «չափավոր տարրերից»: Տարրերնակ, բոլորո-վին թերի, դուռ լիբերալ, վոչ-մարքսիստական բնույթի բնութագրի: Յես ել պատրաստ եմ համաձայնելու, վոր վո-րոշ իմաստով—հետևյալ նամակում յես ցույց կտամ, թե, հատկապես ինչ իմաստով—ամեն մի կառավարություն այժմ, հեղափոխության առաջին ետապն ալարտվելուց հետո, պետք է «չափավոր» լինի: Բայց բացարձակապես անթույլատրելի յե թաղցնել իրենից և ժողովրդից, վոր այդ կառավարությունն ուղղում է իմպերիալիստական պա-տերազմը շարունակել, վոր նա անդլիական կապիտալի դոր-ժակալն է, վոր նա ուղղում է միապետությունը վերականդ-նել և կարլածատերերի ու կապիտալիստների տիրապետու-թյունն ամրապնդել:

Կոչը հայտարարում է, վոր բոլոր գեմոկրատները պետք է «պաշտպանեն» նոր կառավարությունը, և վոր Բանվորների Դեպուտատների Սորհրդը խնդրում է լիազորում է Կերենսկուն մասնակցել Ժամանակավոր Կառա-վարությանը: Պայմաններն են—խոստացած ռեֆորմների իրագործումը դեռևս պատերազմի ժամանակ, աղբյուրնե-րի «կուլտուրական» (միա՞յն) դարդացման «աղատու-թյան» յերաշխիք (դուռ կադետական, լիբերալ-աղքատիկ ծրագրեր) և ժամանակավոր Կառավարության դործողու-թյունների վրա հսկելու համար հատուկ Կոմիտեյի, Բան-վորների Դեպուտատների Սորհրդի անդամներից և «գլխ-վորականներից» կազմված Կոմիտեյի ստեղծում:

Յերկրորդ կարգի գաղափարներին ու լոզունգներին վերաբերող այդ Հսկողության Կոմիտեյի մասին առանձին խոսք կլինի ներքևը:

Իսկ ոռոսական Լուի Բլանի՝ Կերենսկու նշանակումը, և նոր կառավարության աջակցելու կողմը կարելի յե ասել, հեղափոխության դործին և պրոլետարիատի դործին դավա-ճանելու մի կլասիկ օրինակ է, հատկապես այն կարգի դա-վաճանություն, վորը 19-րդ դարի մի ամբողջ շարք հեղա-փոխություններ կործանեց, անկախ նրանից, թե վորքան



են անկեղծ և սոցիալիզմին նվիրված՝ աշխարհի քաղաքականութեան զեկապարներն ու կողմնակիցները:

Պրոլետարիատը չի կարող և չպետք է աջակցի պատերազմի կառավարութեանը, սեստավրացիայի կառավարութեանը: Ռեակցիայի դեմ կռիւնը համար, Ռոմանովներէ և նրանց բարեկամներէ կողմից միապետութեանը վերականգնելու և հակահեղափոխական զորք հավաքելու հնարավորութեան հակահակառակ զորք հավաքելու տալու համար ամենաին Գուչկովին և Ընկ. աջակցելը չէ անհրաժեշտ, այլ պրոլետարական միլիցիա կազմակերպելը, ընդլայնելը, ամբարդելը, բանվորներէ զեկապարութեամբ ժողովրդին ղեկնելը: Սոսնց այդ գլխավոր, հիմնական, արժանաւան միջոցի խոսք անգամ չի կարող լինել վո՛չ միապետութեան վերականգնմանը և խոստացած ազատութեանները խելելու կամ խուլելու փորձերին լուրջ դիմադրութեան ցույց տալու մասին, վո՛չ եւ հաց, հաշտութեան և ազատութեան ստանալու ուղին հաստատապէս վտար ղեկելու մասին:

Յեթե Չխեիձեն, վորը կերենակու հետ միասին առաջին ժամանակավոր կառավարութեան (Դումայի՝ 13 անձից բաղկացած կոմիտէի) անդամ է յեղել, յերկրորդ ժամանակավոր կառավարութեան մեջ իրոք վերը մատնանշված կամ նման բնույթի սկզբունքային նկատառումներով չի մտել, ապա այդ նրան պատիւ է բերում: Այդ պետք է պարզորոշ ասել: Դժբախտաբար, աշխարհի մեկնարանումը հակառակ է ուրիշ փաստերին և ամենից առաջ՝ Սկոբելեւի ձառին, վորը միշտ եւ Չխեիձեյի հետ ձեռք-ձեռքի յե ընթացել:

Սկոբելեւին ասել է, յեթե հավատանք վերահիշյալ աղբյուրին, վոր «սոցիալական» (? ըստ յերևութին՝ սոցիալ-դեմոկրատական) «խումբը և բանվորները միայն թեթե բանջութեան (թեթե կոնտակտ) ունեն ժամանակավոր կառավարութեան նպատակներէ հետ», վոր բանվորները հաշտութեան են պահանջում և յեթե պատերազմը շարունակի, ապա միևնույն է՝ դարնանը կատաստրոֆ կլինի, վոր «բանվորները հասարակութեան (լիբերալ հասարակու-

թեան) հետ ժամանակավոր համաձայնութեան (eine vorläufige Waffenfreundschaft) են կնքել թեև նրանց քաղաքական նպատակները, ինչպէս յերկինքը դեռնից, հեռու յեն հասարակութեան նպատակներէ», վոր «լիբերալները պետք է հրաժարվեն պատերազմի անխմստ (unsinnige) նպատակներէ» և այլն:

Այդ ճառն այն բանի որինակն է, ինչ վոր մենք վերևում, «Социал-Демократ»-ից բերած ցիտատում անլանեցինք «տարտանում» բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Լիբերալները, միալով լիբերալներ, չեն կարող «հրաժարվել» պատերազմի «անխմստ» նպատակներէ, վորոնք, իրենց ասած, վորոշվում են վո՛չ թե մենակ նրանց կողմից, այլ անդո-Ֆրանսական Ֆինանսական կապիտալի, համալսարանային հոսիկու, հարյուրավոր միլիարդներով չափով ուժի տեր կապիտալի կողմից: Վո՛չ թե պետք է լիբերալներին «համոզել», այլ բանվորներին պարզաբանել, թե ինչու լիբերալները փակուղու մեջ են ընկել, ինչու յե նրանց ձեռք ու վտարը կապված, ինչու յեն նրանք քաղցնում թե՛ ցարիզմի դաշնագրերն Անդլիայի ու մյուսն: Հետ, թե՛ ուսուսական կապիտալի գործարքներն անդո-Ֆրանսական ու մյուս կապիտալների հետ և այլն:

Յեթե Սկոբելեւին ասում է, թե բանվորները լիբերալ հասարակութեան հետ թեկուզ վորեն համաձայնութեան են կնքել, չբողբելով դրա դեմ, Դումայի ամբիոնից չպարզաբանելով դրա վնասը բանվորների համար, ապա նա դրանով իսկ հավանութեան է տալիս համաձայնութեանը: Իսկ աշխարհ յերբեք պետք չեն անել:

Բանվորների Դեպուտատների Սորհրդի և ժամանակավոր կառավարութեան միջև կնքված համաձայնութեանը Սկոբելեւի կողմից ուղղակի կամ անուղղակի, պարզ արտահայտված ձեռով՝ թե լուեյան հովանութեան տալը Սկոբելեւի տատանումն է դեպի բուրժուազիան: Սկոբելեւի հայտարարութեանը, թե բանվորները հաշտութեան են պահանջում, թե նրանց նպատակները լիբերալների նպատակ-



ներից այնպես հեռու չեն, ինչպես յերկինքը դետնից, Սկոբելևիչի տատանումն է դեպի պրոլետարիատը:

Իր նպատակով գուտ-պրոլետարական, իսկապես հեղափոխական և խորապես ճիշտ է Բանվորների Դեպուտատների Խորհրդի մեր ուսումնասիրած կոչի յերկրորդ քաղաքական դադարը, այն է՝ «Հսկողութեան Կոմիտեն» (յես չգիտեմ արդյոք հենց այդպես է կոչվում նա ուսերին. յես աղատ կերպով թարգմանում եմ Փրասերենից) ստեղծելու դադարը, ժամանակավոր Կառավարութեան վրա հենց պրոլետարների-գինվորների հսկողութեան սահմանելու դադարը:

Այ, այդ դո՛րծ է: Այ, այդ վայել է ազատութեան համար, հաշտութեան համար, ժողովրդին անհրաժեշտ հացի համար իրենց արշուներ թափած բանվորներին: Այ, այդ ունի քայլ է թե՛ ցարիզմի դեմ, թե՛ միապետութեան դեմ և թե՛ Գուչկով-Լվով ու Լենկ. միապետականների դեմ ունի յերաշխիքներ ստեղծելու ուղիով: Այ, այդ նշան է այն բանի, ժոր ուսական պրոլետարիատը, չնայած և վոչ մի բանի, առաջ է անցել համեմատած 1848 թ. Փրանսական պրոլետարիատի հետ, վորը «լիազորում եր» Լուի Բլանին: Այ, այդ ապացույց է, վոր պրոլետարական մասսայի բնագլուհն ու խելքը չի բավարարվում դեկլամացիաներով, բացականչութուններով, ունիորմների ու ազատութունների խոստումներով, բանվորների «լիազորութեամբ մինիստրի» կոչումով և սրանց նման խարուսիկ բաներով, այլ հենարան է փնտռում միայն այնտեղ, վորտեղ աշխարհի հենարան կա, — պրոլետարիատի, գիտակից բանվորների կազմակերպած ու ղեկավարած ժողովրդական զինված մասսաների մեջ:

Այդ մի քայլ է ճիշտ ուղիով, բայց միայն ստաջին քայլը:

Յեթե այդ «Հսկողութեան Կոմիտեն» մնա իբրև մի զուտ պաուլամենտական, միայն քաղաքական տիպի հաստատութուն, այսինքն՝ մի հանձնաժողով, վորը «հարցեր և տալու» ժամանակավոր Կառավարութեանը և նրանից պատաս-

խաններ և ստանալու, այն ժամանակ այդ այնուամենայնիվ կմնա վորպես խաղալիք, այն ժամանակ այդ վոչինչ է:

Իսկ յեթե դրա շնորհիվ, անհապաղ և ինչ դնով ել լինի, ստեղծվելու յե իսկապես համաժողովրդական, իսկապես բոլոր սղամարդկանց ու բոլոր կանանց ընդգրկող բանվորական միլիցիա կամ բանվորական աշխարհագոր, վորը վո՛չ միայն փոխարինելու յե կոտորված և հեռացված վոստիկանութեանը, վո՛չ միայն անհնարին է դարձնելու նրա վերականգնումը վո՛չ վորևէ միապետական-սահմանադրական, վո՛չ ել վորևէ դեմոկրատական-հանրապետական կառավարութեան ձեռքով վո՛չ Պետերում, վո՛չ ել Ռուսաստանի վորևէ այլ վայրում, — այդ դեպքում Ռուսաստանի առաջավոր բանվորներն իսկապես վոտք են դնում նոր և մեծ հաղթութունների ուղին, այն ուղին, վորը տանում է դեպի հաղթութուն պատերազմի դեմ, դեպի այն լողունդի դործնական իրականացումը, վորը, ինչպես լրագրերն են ասում, վայրում եր Պետերում Պետական Դումայի առաջ գտնվող հրապարակում ցույց անող հեծյալ զորքերի դրոշի վրա՝

«Կեցցե՛ն բոլոր յերկրների սոցիալիստական հանրապետութունները»:

Իմ մտքերն այդ բանվորական աշխարհագորի առթիվ յես կշարադրեմ հետևյալ նամակում:

Յես կաշխատեմ այնտեղ ցույց տալ, մի կողմից, վոր հենց համաժողովրդական, բանվորների ղեկավարած աշխարհագորի ստեղծումն է որվա ճիշտ լողունդը, վոր համապատասխանում է այն յուրահատուկ անցման մոմենտի տակտիկական խնդիրներին, վոր ապրում է ուսական հեղափոխութունը (և համաշխարհային հեղափոխութունը), իսկ մյուս կողմից, վոր այդ բանվորական աշխարհագորի հաջողութեան համար նա պետք է լինի — նախ՝ համաժողովրդական, մասսայական՝ միմչև ընդհանրապետությունը, ընդգրկի իսկապես ամբողջ յերկսեռ աշխատունակ բնակչութունը. յերկրորդ՝ նա պետք է անցնի վո՛չ միայն զուտ վոստիկանական, այլև համապետական ֆունկցիաները ուղ-



մական ֆունկցիաների և մթերքների հասարակական արտադրության ու բաշխման վերահսկողության հետ միացնելուն:

Ն. Լ. Ե. Դ. Բ.

Յուլիի, 22 (9) մարտի 1917 թ.

P. S. Յեւ մոռացել եմ նշանակել նախորդ նամակի ամսաթիվը—մարտի 20 (7)–ը:

Առաջին անգամ տպագրված է 1924 թվին  
«Ленинский Сборник» II-ում:

ՆԱՄԱԿ ՅԵՐՐՈՐԴ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Այն հետևությունը, վոր յես յերեկ արեցի Չխեիձեյի տատանվող տակտիկայի նկատմամբ, լիովին հաստատվեց այսօր, մարտի 10 (23)–ին, յերկու փաստաթղթով: Առաջինը Ստոկհոլմից «Ֆրանկֆուրտի Լրագրին» հեռագրով հաղորդված քաղվածք է մեր կուսակցության, Ռուս. Ս. Դ. Բան. կուսակցության ԿԿ–ի Պիտերում հրապարակած մանիֆեստից: Այդ փաստաթղթում վոչ մի խոսք չկա վոչ Գուչկովի կառավարությանն աջակցելու մասին, վոչ էլ նրան տապալելու մասին. բանվորներին ու զինվորներին կոչ է արվում կազմակերպվել Բանվորների Դեպուտատներին խորհրդի շուրջը, իրենց ներկայացուցիչներն ընտրել այդ խորհրդի համար՝ պայքարելու ցարիզմի դեմ հանուն հանրապետության, հանուն Ծածամյա աշխատանքային ուրվա, հանուն, կարվածատիրական հողերն ու հացի պաշարները զրավելու, իսկ վոր գլխավորն է—հանուն թալանչիական պատերազմը դադարեցնելու: Ընդամենն առանձնապես կարեւոր է առանձնապես հրատապ է մեր ԿԿ–ի այն միանշանակ ճիշտ միտքը, թե հաշտության համար անհրաժեշտ են հարաբերություններ բոլոր պատերազմող յերկրների պրպետարների հետ:

Բուրժուական կառավարությունների) փոխադարձ բանակցություններից ու հարաբերություններից հաշտության սպասելը ինքնախաբեկություն է ժողովրդին խաբել կլինի:

Յերկրորդ փաստաթուղթը Ստոկհոլմից մի այլ գեթականական լրագրի («Փոստի Լրագրին») նույնպես հեռագրով



Հաղորդված այն տեղեկությունն է, Վոր վերաբերում է Դոմայի՝ Չխեիձեյի Փրակցիայի մարտի 2 (15)-ի խորհրդակցությունն աշխատավորական խմբակի (? Arbeiterfraction) և 15 բանվորական միությունների ներկայացուցիչներին հետ և հետևյալ որը հրապարակված կոչին։ Այդ կոչի 11 կետերից հետագիւրը բերում է միայն յեւեքը. 1-ին—հանրապետություն պահանջ, 7-րդ—հաշտություն և հաշտության բանակցություններն անհապաղ սկսելու պահանջ և 3-րդ, վոր պահանջում է «ռուսական բանվոր դասակարգի ներկայացուցիչներին բաժնարար չափով մասնակցությունը կառավարություն մեջ»։

Յեթե այս կետը ճիշտ է բերված, ապա յես հասկանում եմ, թե բուրժուազիան ինչի համար է դուրում Չխեիձեյին։ Յես հասկանում եմ, թե ինչու իմ կողմից վերը բերված՝ անգլիական դուշկովականների դուլասանքին «Times»-ում (Թայմզում), ավելացավ Փրանսական դուշկովականների դուլասանքը «Le Temps»-ում<sup>1</sup>։ Փրանսական միլիոնատերերի ու խմբերիալիստների այդ լրագիրը մարտի 22-ին դրում է. «Բանվորական կուսակցությունների առաջնորդները, մանավանդ պ. Չխեիձեն, իրենց ամբողջ ազդեցությունը դործ են դնում, վորպեսզի չափավորեն բանվոր դասակարգերի ցանկությունները»։

Հիշալի, պահանջել, վոր բանվորները «մասնակցեն» Գուշկով-Միլյուկովյան կառավարությունը՝ այդ թեորիայես ու քաղաքականապես անհեթեթություն է. իբրև վորքամասնություն մասնակցելը կնշանակեր խաղալիք դառնալ. «հալթսար չափով» մասնակցելն անհնարին է, վորովհետև չի կարելի պատերազմը շարունակելու պահանջը հաշտեցնել զինադադար կնքելու և հաշտության բանակցություններն սկսելու պահանջին հետ. վորպես մեծամասնություն «մասնակցելու» համար հարկավոր է Գուշկով-Միլյուկովյան կառավարությունը տալալիլու ուժ ունենալ։ Գործնականում «մասնակցություն» պահանջը ամենալատթար լուրրանակա-

<sup>1</sup> — «Ժամանակ»։ Խմբ.։

նություն է, այսինքն՝ դասակարգային կռիւ և նրա ռեալ պայմանների մոռացում, ամենադատարկ հնչուն Փրազով հրապարակել, բանվորներին մեջ սրտորանքներ տարածել քանգագին ժամանակը Միլյուկովի կամ Կերենսկու հետ բանակցություններ վարելու վրա կորցնել, այն ժամանակը, վորը պետք է դործ դնել իսկալան դասակարգային և հեղափոխական ուժ, պրոլետարական միլիցիա ստեղծելու վրա, վորը կարողանա վստահություն ներշնչել բնակչության բոլոր չքավորագույն՝ նրա ահադին մեծամասնությունը կազմող խավերին, ոգնել նրանց կազմակերպելու, ողնել նրանց հացի, հաշտության, ազատության համար պայքարելու։

Չխեիձեյի և իր խմբի կոչի այդ սխալը (յես չեմ խոսում Կազմկոմի, Կազմակերպական Կոմիտեյի կուսակցության մասին, վորովհետև այն աղբյուրներում, վորոնք ինձ մատչելի յեն, Կազմկոմի մասին ծպտուն անդամ չկա) — այդ սխալն է՛լ ավելի տարրորինակ է այն պատճառով, վոր մարտի 2 (15)-ի խորհրդակցությանը Չխեիձեյի ամենամոտիկ համախոհը՝ Սկորբելովը, ինչպես թերթերն են հաղորդում, ստել է հետևյալը. «Ռուսաստանը՝ յերկրորդ, իսկական (wirklich, տառացի՝ իրական) հեղափոխության նախորդակին է դառնում»։

Ահա այս մի ճշմարտություն է, վորից Չխեիձեն ու Սկորբելովը մոռացել են դործնական հետևություններ անել։ Յես չեմ կարող այստեղից, իմ այս անիծյալ հեռատանից, դատել, թե վորքան մոտ է այդ յերկրորդ հեղափոխությունը։ Սկորբելովն այնտեղ, տեղում, ավելի լավ է տեսնում։ Դրա համար ել յես այնպիսի հարցեր չեմ առաջադրում, վորոնց լուծման համար յես չունեմ և չեմ կարող ունենալ կոնկրետ տվյալներ։ Յես միայն ընդդում եմ, վոր «կողմնակի վիկան», այսինքն՝ մեր կուսակցությանը չպատկանող Սկորբելովը, հաստատում է այն փաստական հետևությունը, վորին յես հանդել եմ առաջին նամակում, այն է՝ վետրեր-վար-մարտի հեղափոխությունը միայն հեղափոխության առաջին ետալն էր։ Ռուսաստանն ապրում է հեղափոխու-



Թյան հաջորդ ետապին կամ, Սկոբելեվի արտահայտութեամբ, «յերկրորդ հեղափոխութեան» անցնելու յուրահատուկ պատմական մոմենտ:

Յեթե մենք ուզում ենք մարքսիստներ լինել և ամբողջ աշխարհի հեղափոխութեաններին վերջից բան սովորել, մենք պետք է աշխատենք հասկանալ, թե հատկապես ինչ է այդ անցման մոմենտի յուրարկնակութիւնը, և ինչ տակտիկայէ բղխում նրա որդեկալի առանձնահատկութեանները:

Դրութեան յուրորինակութեանն այն է, վոր Գուչիով-Միլյուկովյան կառավարութեանն առաջին հաղթութեանը չափադանց հեշտ կերպով տարալ շնորհիւ հետեյալ յերեք ամենազլխավոր հանգամանքների. 1) անգլո-ֆրանսական Փինանսական կապիտալի և նրա գործակալներին ոգնութիւնը, 2) բանակի վերնախավերի մի մասի ոգնութիւնը, 3) ամբողջ ռուսական բուրժուազիայի պատրաստի կազմակերպութիւնը զեմստոյական, քաղաքային հիմնարկներում, Պետական Դումայում, ռազմ-արդյունաբերական կոմիտեներում և այլն:

Գուչիովի կառավարութիւնը սեղմիչի մեջ է դտնվում, կապիտալի չահերով կաշկանդված, նա ստիպված է ձգտել թարանջխական, ավազակային պատերազմը շարունակելու, կապիտալի ու կարվածատերերի հրեշալոր չահույթները պահպանելու, միապետութիւնը վերականգնելու: Իր հեղափոխական ծագումով և ցարիզմից դեպի զեմոկրատիա կրտուկանցում կատարելու անհրաժեշտութեամբ կաշկանդված, քաղցած և հաշտութիւն պահանջող մասսաների ճընշման ներքո դտնվելով, կառավարութիւնն ստիպված է ստեղծել, շուտ ու մուտ դալու, ժամանակ չահելու, վորքան կարելի յէ շատ «հուշակելու» ու խոստանալու (խոստումները միակ բանն է, վորը շատ հեծան է նույնիսկ կատաղի թանդութեան շըջանում), վորքան կարելի յէ քիչ կատարելու, մի ձեռքով զիջումներ տալու, մյուսով դրանք խլելու:

Վորոչ պարադաներում, իրեն համար լավադույն դեպքում, նոր կառավարութիւնը կարող է մի քիչ ձգձգել վերդումը, հենվելով ամբողջ ռուսական բուրժուազիայի և

բուրժուական ինտելիգենցիայի կազմակերպական բոլոր ընդունակութեաններին վրա: Բայց մինչև անգամ այդ դեպքում նրա ուժերից վեր է խուսափել վերդումից, վորովհետեւ չի կարելի դուրս պրծնել համաշխարհային կապիտալիզմի առաջ բերած իմպերիալիստական պատերազմի սարսափելի հրեշի և սովի ճիրաններից՝ չթողնելով բուրժուական հարաբերութեաններին հողը, չդիմելով հեղափոխական ձեռնարկումների, չդիմելով թե՛ ռուսական, թե՛ համաշխարհային պրոլետարիատի ամենամեծ պատմական հերոսութեանը:

Այստեղից հետեւութեան. մենք չենք կարող մի հարվածով տապալել նոր կառավարութիւնը կամ, յեթե մենք կարողանանք այդ անել (հեղափոխական ժամանակներում հնարավորի սահմանները հաղթարարատիկ ընդարձակվում են), ապա մենք չենք կարող իշխանութիւնը պահել, առանց ամբողջ ռուսական բուրժուազիայի և ամբողջ բուրժուական ինտելիգենցիայի հիանալի կազմակերպութեանը հաղադրելու քաղաքային և գյուղական չքավորութեան, կիսապրոլետարիատի ու մանր տնտեսատերերի ամբողջ անսահման մասսային զեկավարող պրոլետարիատի նույնքան հիանալի կազմակերպութիւնը:

Միենույն է, արդեն բռնկվել է արդյոք «յերկրորդ հեղափոխութեանը» Պիտերում (յես ասացի, վոր բոլորովին անհեթեթ կլինէր արտասահմանից նրա հասունացման կոնկրետ տեմպը հաշիւի առնելու միտքը), թե նա հետաձգված է վորոչ ժամանակով, կամ նա արդեն սկսվել է մուստատանի մի քանի առանձին վայրերում (սրա նկատմամբ, ըստ յերեւութին, մի քանի ցուցումներ կան),— համեմայն դեպի թե՛ նոր հեղափոխութեան նախորդակին, թե՛ նրա ընթացքում, թե՛ նրա հետեյալ որը մոմենտի լոգունդը պրոլետարիատի կազմակերպութիւնը պետք է լինի:

Ընկեր-բանվորներ: Դուք յերեկ պրոլետարական հերոսութեան հրաջներ ցուցաբերեցիք, տապալելով ցարական միտախտութիւնը: Դուք անխուսափելիորեն շատ թե քիչ մոտ ապադայում ստիպված պետք է լինեք (զուցե ստիպ-



ված եք նույնիսկ այժմ, յերբ յես դրում եմ այս տողերը),  
կրկին նույնպիսի հերոսության հրաշքներ ցուցաբերել իմ-  
պերիալիստական սրտերագմ վարող կալվածատերերի և կա-  
պիտալիստների իշխանությունը տապալելու համար: Դուք  
չեք կարողանա այդ հաջորդ, «խկական» հեղափոխության  
ժամանակ հաստատապես հաղթել, յեթե դուք պրոլետարա-  
կան կազմակերպվածության հրաշքներ չցուցաբերեք:

Մոմենտի լուրենդը կազմակերպությունն է: Բայց դրա-  
նով սահմանափակվել՝ կենդանակեր դեռևս միջինն չասել,  
վորովհետև, մի կողմից՝ կազմակերպությունը հարկավոր  
է միշտ, ուրեմն «մասսաների կազմակերպման» անհրաժեշ-  
տության սոսկ մատնանշումը բացարձակապես մոչինչ դեռ  
չի պարզաբանում, իսկ մյուս կողմից, ով դրանով սահմա-  
նափակվեք, նա միայն կհանդիսանա լիբերալների ձայնա-  
կիցը, վորովհետև լիբերալներն ել հե ն ց իրենց տիրապե-  
տությունն ամրապնդելու համար ուզում են, վոր բանվոր-  
ները սո վ ու ր ա կ ա ն «լեզալ» («նորմալ» բուրժուական հա-  
սարակության տեսակետից) կազմակերպություններից դեմը  
չգնան, այսինքն՝ վորպեսզի բանվորները միայն անդամա-  
դրվեն իրենց կուսակցությանը, իրենց արհեստակցական  
միությանը, իրենց կոոպերատիվին և այլն և այլն:

Բանվորներն իրենց դասակարգային բնազդով հասկա-  
ցան, վոր հեղափոխական ժամանակում նրանց բոլորովին  
այլ, վոչ միայն սովորական կազմակերպությունն է հարկա-  
վոր, նրանք ճիշտ կերպով բռնեցին 1905 թվի մեր հեղափո-  
խության և 1871 թվի ֆարիզյան Կոմունայի փորձի ցույց  
ալած ուղին, նրանք ստեղծեցին Բանվորների Դեպուտատ-  
ների խորհուրդ, նրանք սկսեցին դարդացնել, ընդլայնել,  
ամրապնդել այդ խորհուրդը ներդրալելով զինվորների  
դեպուտատների և, անկասկած, գյուղական վարձու բան-  
վորների դեպուտատներին և ապա (այս կամ այն ձևով)  
ամբողջ գյուղացիական չքավորության դեպուտատներին:

Նման կազմակերպությունների ստեղծումը Ռուսաստա-  
նի առանց բացառության բոլոր վայրերում, պրոլետարա-

կան ու կիսապրոլետարական բնակչության առանց բացա-  
ռության բոլոր պրոֆեսիաների ու խալիերի, այսինքն՝ բո-  
լոր աշխատավորների և չահագործվողների համար, յեթե  
տնտեսադիտորեն պակաս ճշգրիտ, բայց ավելի մասսայական  
արտահայտություն դործածենք, ահա ամենաառաջնակարգ,  
ամենաանհետաձգելի կարևորություն ունեցող խնդիրը:  
Կանխելով՝ նշեմ, վոր ամբողջ գյուղացիական մասսայի հա-  
մար մեր կուսակցությունը (նոր տիպի պրոլետարական  
կազմակերպություններում նրա ունեցած առանձին դերի  
մասին յես հույս ունեմ հաջորդ նամակներից մեկում խոսե-  
լու) պետք է առանձնապես հանձնարարի վարձու բանվոր-  
ների և ապա մանր, հաց չվաճառող, հողագործների՝ ունե-  
վոր գյուղացիներից, առանձին խորհուրդներ. առանց այդ  
պայմանի չի կարելի վո՛չ իսկապես պրոլետարական քաղա-  
քականություն վարել ընդհանրապես ասած<sup>1</sup>, վո՛չ ել ճիշտ  
կերպով մոտենալ միլիոնավոր մարդկանց կյանքի ու մահ-  
վան կարևորագույն գործնական հարցին—հացի ճիշտ  
բաշխմանը, նրա արտադրությունն ավելացնելուն և այլն:

Բայց, հարց է ծագում, ի՞նչ պետք է անեն բանվորնե-  
րի դեպուտատների խորհուրդները: Նրանք, «պետք է  
դիտվեն վորպես ապստամբության որդաններ, վորպես հե-  
ղափոխական իշխանության որդաններ», դրել ենք մենք  
Ժընեվի «Социал-Демократ»-ի № 47-ում, 1915 թվականի  
հոկտեմբերի 13-ին:

1871 թ. Կոմունայի և 1905 թվի ուսական հեղափոխու-  
թյան փորձից հետեցրած այդ տեսական դրույթը պետք է  
պարզաբանվի և ալելի կոնկրետ կերպով դարդացվի Ռու-  
սաստանի հենց տվյալ հեղափոխության հենց տվյալ ետապի  
գործնական ցուցումների հիման վրա:

<sup>1</sup> Գյուղում այժմ պաշար կծավալվի մանր և մասամբ միջակ գյու-  
ղացիության համար: Կալվածատերերը, հենվելով ունեոր գյուղացիների  
վրա, գյուղացիությանը կտանեն բուրժուազիային յենթարկելու: Մենք,  
հենվելով գյուղական վարձու բանվորների ու չքավորության վրա, նրան  
պետք է տանենք դեպի ամենասերտ դաշինք քաղաքի պրոլետարիատի  
հետ:



Մեզ հեղափոխական իշխանությունն է հարկավոր, մեզ (անցման վորոշ շրջանի համար) պետությունն է հարկավոր: Դժբանքով մենք տարբերվում ենք անարխիստներից: Հեղափոխական մարքսիստներն և անարխիստներն տարբերությունը միայն այն է, վոր առաջինները կողմնակից են կենտրոնացված, խոշոր, կոմունիստական արտադրության, իսկ յերկրորդները՝ մասնատված, մանր արտադրության: Վո՛չ, հենց իշխանության, պետության հարցում տարբերությունն այն է, վոր մենք կողմնակից ենք պետության հեղափոխական ձևերը հեղափոխականորեն ոգտադործելու՝ սոցիալիզմի համար պայքարելու նպատակով, իսկ անարխիստները դեմ են:

Մեզ հարկավոր է պետություն: Բայց մեզ հարկավոր է վաչ այնպիսի պետություն, ինչպես այդ ստեղծել է բուրժուազիան սոֆեիստները, սկսած սահմանադրական միապետություններից և վերջացրած՝ ամենադեմոկրատական հանրապետություններով: Յեվ այդ է մեր տարբերությունը հին, վատել սկսող սոցիալիստական կուսակցությունների ոպարտունիստներից և կաուցիլիականներից, վորոնք ազավաղել կամ մոռացել են Փարիզի Կոմունայի դասերը և այդ դասերի վերլուծությունը Մարքսի ու Ենգելսի կողմից:

Մեզ հարկավոր է պետություն, բայց վաչ այնպիսի պետություն, վորը հարկավոր է բուրժուազիային, ժողովրդից անջատված և ժողովրդին հակադրվող իշխանության որդաններով, ինչպես վոստիկանությունը, բանակը, բյու-

<sup>1</sup> Հետևյալ նամակներից մեկում կամ մի հատուկ հոդվածում յես մանրամասն կանգ կառնեմ այդ վերլուծության վրա, վոր տրված է մասնավորապես Մարքսի «Բաղադրացիական պատերազմը Ֆրանսիայում» ուղեատության մեջ, այդ յերկի 3-րդ հրատարակության առթիվ Ենգելսի դրած սուղաբանում, Մարքսի՝ 1871 թ. ապրիլի 12-ի և Ենգելսի՝ 1875 թ. մարտի 18-28-ի նամակներում, ինչպես նաև մարքսիզմի կատարյալ ազնաոման վրա, վոր կատարել է Կաուցկին 1912 թվականի իր բանավեճում Պաննեկուլի դեմ՝ այսպես կոչված «Պետության խորտակման» հարցի շուրջը:

րոկրատիան (չինովնիկությունը): Բուրժուական բոլոր հեղափոխությունները միայն կատարելադործել են այդ պետական մեքենան, միայն այդ մեքենան մի կուսակցութան ձեռքից մյուս կուսակցության ձեռքն են հանձնել:

Իսկ պրոլետարիատը, յեթե նա ուզում է պաշտպանել տվյալ հեղափոխության նվաճումները և ավելի առաջ գնալ, հաշտություն, հաց և ազատություն նվաճել, պետք է, Մարքսի խոսքերով արտահայտվելով՝ «ջարդի» այդ «պատրաստի» պետական մեքենան և այն նորով փոխարինի, վոստիկանությունը, բանակը և բյուրոկրատիան միաձուլելով անխտիր զինված ժողովրդի հետ: Ընթանալով 1871 թվի Փարիզի Կոմունայի և 1905 թվի ուսական հեղափոխության փորձով մասնանշված ուղիով, պրոլետարիատը պետք է կազմակերպի և զինի բնակչության բոլոր ամենաչքավոր, չահագործվող մասերին, վորպեսզի նրանք իրենք անմիջաբար իրենց ձեռքը վերցնեն պետական իշխանության որդանները, իրենք կազմեն այդ իշխանության հիմնաքիները:

Յեվ Ռուսաստանի բանվորներն արդեն առաջին հեղափոխության առաջին ետապի ժամանակ, 1917 թ. վետեր-վար—մարտին բռնեցին այդ ուղին: Ամբողջ խնդիրն այժմ այն է, վոր պարզ հասկացվի, թե ինչպիսի ուղի է այդ նոր ուղին,—այն է, վոր համարձակ, հաստատ և համաոորեն առաջ գնան այդ ուղիով:

Անդլո-Ֆրանսական և ուսական կապիտալիստներն ուզում էյին «միայն» պաշտոնանկ անել կամ նույնիսկ «վախեցնել» Նիկոլայ II-ին, անձեռնմխելի թողնելով հին պետական մեքենան, վոստիկանությունը, բանակը, չինովնիկությունը:

Բանվորներն ավելի առաջ գնացին և ջարդեցին այդ մեքենան: Յեվ այժմ վո՛չ միայն անդլո-Ֆրանսական, այլ և գերմանական կապիտալիստները վոռմում են կատաղությունից ու սարսափից, տեսնելով, որինակ, թե ինչպես էյին ուսական զինվորները զնդակահարում իրենց սպանե-



քին, թեկուղ հենց Գուչկովի ու Միլյուկովի կողմնակից ազմիրալ Նեպենինին:

Յեռ ասացի, վոր բանվորները ջարդեցին այն, հին պետական մեքենան: Ավելի ճիշտ՝ սկսեցին ջարդել այն: Վերցնենք կոնկրետ որինակ:

Վոստիկանությունը մասամբ կոտորված է, մասամբ ել պաշտոնանկ է արված Պիտերում և ուրիշ շատ վայրերում: Գուչկով-Միլյուկովյան կառավարութունը չի կարողանա վո՛չ միապետութունը վերականգնել, վո՛չ ել ընդհանրապես իշխանութունը պահել, առանց վերականգնելու վոստիկանութունը, վորպես բուրժուազիայի հրամանատարության տակ գտնվող, ժողովրդից անջատված և նրան հակադրված, ղինված մարդկանց մի առանձին կազմակերպութուն: Այդ պարզ է, ինչպես պարզ է ասածու պարզ որը:

Մյուս կողմից, նոր կառավարութունը պետք է հաշվի առնի հեղափոխական ժողովրդին, նրան կերակրի կիսաղիջումներով ու խոստումներով, ժամանակը ձգձգի: Դրա համար ել նա դիմում է կիսամիջոցի. նա հաստատում է «ժողովրդական միլիցիա» ընտրովի իշխանութուններով (այս սարսափելի վայելո՛ւ է, սարսափելի դեմոկրատորեն՝, հեղափոխականորեն և գեղեցի՛կ և հնչում) — բայց... բայց, 1-ին՝ նրան դնում է գեմստվոյական և քաղաքային ինքնավարութունների վերահսկողության տակ, սրանց իշխանության տակ, այսինքն՝ Նիկոլայ-Արյունոտի և Ստոլիպին-Կախողի որենքներով ընտրված կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության տակ: 2-րդ՝ «ժողովրդի» աչքերին թող փչելու համար, միլիցիան «ժողովրդական» անվանելով, նա գործնականում ժողովրդին կոչ էի անում անխոր մասնակցելու այդ միլիցիային և գործատերերին ու կապիտալիստներին չի պարտավորեցնում վնասելու ծառայողներին ու բանվորներին այն ժամերի ու րբերի սովորական վարձը, վոր նրանք նվիրում են հասարակական ծառայությանը, այսինքն՝ միլիցիային:

Ահա թե վորտեղ է թաղված չան գլուխը: Ահա թե

Գուչկովներին ու Միլյուկովներին կալվածատերական ու կապիտալիստական կառավարութունն ինչ ճանապարհով է հասնում այն բանին, վոր «ժողովրդական միլիցիան» մնում է թղթի վրա, իսկ գործնականում քիչ-քիչ, կամաց-կամաց վերականգնվում է բուրժուական, հակաժողովրդական միլիցիան, սկզբում «8.000 ուսանողներից ու պրոֆեսորներից» (այսպես են նկարագրում արտասահմանյան թերթերը Պիտերի այժմյան միլիցիան) — այդ բացահայտ խաղալի՞ք է, — հետո աստիճանաբար հին ու նոր վոստիկանութունից:

Թույլ չտալ վոստիկանութունը վերականգնելը: Տեղական իշխանութունները ձեռքից բաց չթողնել: Ստեղծել իրոք համաժողովրդական, անխոր-ընդհանրական, պրոլետարիատի կողմից ղեկավարվող միլիցիա, — ահա որվա խնդիրը, ահա մոմենտի լողունը, վորը հավասարապես համապատասխանում է թե՛ հետագա դասակարգային կռիվ, հետագա հեղափոխական շարժման ճիշտ ըմբռնված շահերին, թե՛ դեմոկրատական բնազդին ամեն մի բանվորի, ամեն մի գյուղացու, ամեն մի աշխատավոր ու շահագործվող մարդու, վորը չի կարող չատել վոստիկանությանը, ստրաժնիկներին, ուրյադնիկներին, կալվածատերերին ու կապիտալիստներին հրամանատարութունը՝ ժողովրդի վրա իշխանութուն ստացող ղինված մարդկանց վերաբերմամբ:

Ինչպիսի՞ վոստիկանութուն է հարկավոր նրանց, Գուչկովներին ու Միլյուկովներին, կալվածատերերին ու կապիտալիստներին: Այնպիսին, ինչպես կար ցարական միապետության ժամանակ: Աշխարհի բոլոր բուրժուական ու բուրժուա-դեմոկրատական հանրապետութունները, ամենակարճատև հեղափոխական ժամանակաշրջաններից հետո, իրենց մոտ մտցրել են կամ վերականգնել են հենց այդպիսի վոստիկանութուն, ժողովրդից անջատած և նրան հակադրված, այսպես թե այնպես բուրժուազիային յենթակա ղինված մարդկանց հատուկ կազմակերպութուն:

Ինչպիսի՞ միլիցիա չե հարկավոր մեզ, պրոլետարիատին, բոլոր աշխատավորներին: Իրոք ժողովրդական, այ-



սխեքն՝ նախ, անխտիր ամբողջ բնակչությունից յերկու սե-  
ռի բոլոր չափահաս քաղաքացիներէից բաղկացած, իսկ յերկ-  
րորդ, ժողովրդական բանակի ֆունկցիաները վոստիկանու-  
թյան ֆունկցիաների հետ, պետական կարգի և պետական  
կառավարչութեան գլխավոր և հիմնական որդանի ֆունկ-  
ցիաների հետ միացնող միլիցիա:

Այդ սկզբունքներն ալեկի ակնբախ դարձնելու համար  
վերցնեմ մի գուտ սկեմատիկ որինակ: Ինչ ասել կուզի, վոր  
պրոլետարական միլիցիայի վորեւ «պլան» կազմելու միտ-  
քը անհեթեթություն կլինի. յերբ բանվորները և ամբողջ  
ժողովուրդն իսկական մասսայով գործնականապէս ձեռնա-  
մուխ լինեն գործին, նրանք հարցուր անգամ ալեկի լավ  
կմշակեն ու կկազմակերպեն այդ գործը, քան բոլոր տե-  
սաբանները: Յետ «պլան» չեմ առաջարկում, յետ միայն  
ուզում եմ իմ միտքը պատկերագծել:

Պիտերում միտ յերկու միլիոն բնակչություն կա:  
Դրանց կեսից ալեկին 15-ից մինչև 65 տարեկան է: Վերց-  
նենք կեսը—1 միլիոն: Դեն գցենք նույնիսկ ամբողջ քա-  
ռորդը՝ վորպէս հիվանդներ և այլն, վորոնք հարգելի  
պատճառներով սովյալ մոմենտում չեն մասնակցում հասա-  
րակական ծառայութեան: Մնում է 750·000 մարդ, վորոնք  
միլիցիայում աշխատելով, գիցուք թե, 15 օրից 1 օր (և  
շարունակելով այդ ժամանակի համար տերերից վարձա-  
տրություն ստանալը), 50·000 հոգուց բաղկացած մի բա-  
նակ կկազմեյին:

Ահա թե մեկ ինչ տիպի «պետութեան» և հարկավոր:

Ահա թե վո՛ր միլիցիան գործով, և վո՛չ միայն խոսքով,  
«ժողովրդական» միլիցիա կլինի:

Ահա թե ինչ ճանապարհով մենք պետք և հասնենք այն  
բանին, վոր կարելի չլինի վերականգնել վո՛չ առանձին վոս-  
տիկանութեանը, վո՛չ ել առանձին, ժողովրդից անջատ բա-  
նակը:

Այսպիսի միլիցիայի 100 մասից 95-ը բաղկացած կլինի  
բանվորներից ու գյուղացիներից, իրոք ժողովրդի ահագին

մեծամասնութեան խեղճ ու կամքը, ուժն ու իշխանու-  
թեանը կարտահայտեր: Այդպիսի միլիցիան իսկապէս կզի-  
ներ և զինվորական գործին կվարժեցներ անխտիր ամբողջ  
ժողովրդին, ապահովելով բեակցիայի վերականգնման ամեն  
տեսակ փորձերից, ցարական գործակալների ամեն տեսակ  
մեքենայութեաններէից, վոչ Գուգիովալարի, վոչ Միլյու-  
կովալարի: Այդպիսի միլիցիան կլինի «Բանվորների և  
Զինվորների Դեպուտատների Խորհուրդների» կատարո-  
ղական որդանը, նա բնակչութեան բացարձակ հարգանքն  
ու վստահութեանը կվայելի, վորովհետեւ նա ինքն անխը-  
տիր ամբողջ բնակչութեան կազմակերպութեանը կլինի:  
Այդպիսի միլիցիան դեմոկրատիան, վորն իբրեւ գեղեցիկ  
ցուցանակ է ծառայում կապիտալիստների կողմից ժողո-  
ւրդի ստրկացումը և կապիտալիստների ծաղր ու ծանակը  
ժողովրդի հանդեպ քողարկելու համար, կդարձնի մաս-  
սանքի իսկական դաստիարակութեան, նրանց բոլոր պե-  
տական գործերին մասնակից դարձնելու համար: Այդ-  
պիսի միլիցիան պատանիներին կներգրավի քաղաքական  
կյանքի մեջ, սովորեցնելով նրանց վո՛չ միայն խոսքով,  
այլև գործով, աշխատանքով: Այդպիսի միլիցիան կզար-  
գայնի այն ֆունկցիաները, վորոնք գիտական լեզվով  
ասած, վերաբերում են «բարեկեցութեան վոստիկանու-  
թեան» իրավասութեանը, սանիտարական հսկողութեան և  
այլն, նման գործերի ասպարեզ գրավելով բոլոր չափահաս  
կանանց: Իսկ կանանց հասարակական ծառայութեան, մի-  
լիցիայի, քաղաքական կյանքի ասպարեզ չգրավելով, կա-  
նանց նրանց բթացնող տնային ու խոհանոցային միջավայ-  
րից չկորզելով, չի կարելի ապահովել իսկական աղատու-  
թեանը, չի կարելի նույնիսկ դեմոկրատիա կառուցել, ել  
չենք խոսում սոցիալիզմի մասին:

Այդպիսի միլիցիան կլինի պրոլետարական միլիցիա,  
վորովհետեւ արդյունաբերական ու քաղաքային բանվորները  
նույնքան բնականաբար ու անխուսափելիորեն ղեկավար  
ազդեցութեան ձեռք կբերեյին այդ միլիցիայի մեջ չբաւո-



րազման մատուցելի նկատմամբ, վերջան ընտանիքներն ու ան-  
խուսափելիորեն նրանք դեկալար տեղ դրավելին ժողո-  
վրդի ամբողջ հեղափոխական կռիւի մեջ թե՛ 1905—07 թ.թ.,  
թե՛ 1917 թ.վին:

Այդպիսի միլիցիան կապահովէր բացարձակ կարգ ու  
կանոնը և անձնվիրաբար կենսագործվող ընկերական կար-  
գապահովութիւնը: Իսկ միևնույն ժամանակ նա, բոլոր պա-  
տերազմող յերկրներէ, ներկա ծանր ճգնաժամի պահին  
հնարավորութիւն կտար իսկապես դեմոկրատներն պայքա-  
րելու այդ ճգնաժամի դեմ, ճիշտ և արագորեն կենսագոր-  
ծելու հացի ու մյուս պաշարեղենի բաշխումը իրագործելու  
«ընդհանուր աշխատանքային պարհակը», վոր Ֆրանսիացի-  
ներն աշխատեցին «քաղաքացիական մօրիլիգայի» են անվանում,  
իսկ գերմանացիները՝ «քաղաքացիական ծառայութեան  
պարտականութիւն», և առանց վորի չի կարելի—բանից  
դուրս յեկալ, վոր չի կարելի—բուժել ալաղակային և  
սարսափելի պատերազմի հասցրած ու հասցվող վերքերը:

Մի՞թե Թուրքիայի պրոլետարիատն իր արյունը մի-  
այն նրա համար եր թափում, վոր լուր միայն քաղաքական  
դեմոկրատական ռեֆորմներէ փրկու խոստումներ ստանա:  
Մի՞թե նա չի պահանջելու և չի հաջողեցնելու, վորպեսզի  
ամեն մի աշխատավոր իսկույն ևեք տեսնի ու զգա իր կյան-  
քի վորոշ բարելավումը, վորպեսզի յուրաքանչյուր ընտա-  
նիք հաց ունենա, վորպեսզի յուրաքանչյուր յերեխա մի  
չիչ լալ կաթ ունենա, և վորպեսզի հարուստ ընտանիքում  
վոր մի չափահաս չհամարձակվի ալելի կաթ վերցնել, քա-  
նի դեռ յերեխաներն ապահովված չեն, վորպեսզի ցարի և  
արխատոկրատիայի լքած պալատներն ու հարուստ ընտա-  
նաներն իղուր տեղը դատարկ չմնան, այլ աստատան տան  
անտուն ու չունենոր անձերին: Ո՞վ կարող է կենսագործել  
այդ ձեռնարկումները, բացի համաժողովրդական միլիցիա-  
յից, վորին անպայման պետք է մասնակցեն կանայք՝ աղա-  
մարդկանց հետ համահավասարապես:

Այդպիսի միջոցները դեռևս սոցիալիզմ չեն: Դրանք

վերաբերում են սպառման բաշխմանը, և վոր թե արտա-  
գրութեան վերակազմութեանը: Դրանք դեռ «պրոլետա-  
րիատի դիկտատուրա» չեն լինի, այլ միայն «պրոլետա-  
րիատի և ամենաչքավոր գյուղացիութեան հեղափոխական-  
դեմոկրատական դիկտատուրա»: Բանն այն չէ աշխատ, թե  
ինչպես տեսականորեն դասակարգենք դրանք: Մեծագույն  
սխալ կլինէր, յեթե մենք սկսեյինք հեղափոխութեան բարդ,  
կենսական, արագորեն զարգացող գործնական խնդիրները  
նեղ բմբուխած «թեորիայի» պրոկրուստեան անկողնում տե-  
ղաւորել, փոխանակ թեորիայի մեջ ամենից առաջ և ամե-  
նից շատ գործողութեան ուղեցույց տեսնելու:

Կդանվի՞ր արդե՞ք ուսական բանվորների մասսայի մեջ  
այնքան դիտակցականութիւն, տոկունութիւն, հերոսու-  
թիւն, վորպեսզի «պրոլետարական կազմակերպութեան  
հրաչքներ» ցուցարներն այն բանից հետո, յերբ նրանք ուղ-  
ղակի հեղափոխական կռիւում խիզախութեան, նախաձեռ-  
նութեան, անձնագոհութեան հրաչքներ ցուցարեցին:  
Այդ մենք չգիտենք և դրա մասին գուշակութիւն անելը  
զուր գործ կլինէր, վորովհետև նման հարցերի պատասխա-  
նը միայն պրակտիկան է տալիս:

Այն, ինչ մենք հաստատապես գիտենք և ինչ մենք, վոր-  
պես կուսակցութիւն, պետք է պարզաբանենք մասսանե-  
րին, այդ, մի կողմից՝ այն է, վոր առկա յե մեծագույն ուժ  
ունեցող պատմական մի շարժիչ, վորը չտեսնված ճգնա-  
ժամ, սով, անթիւ աղետներ է առաջացնում: Այդ շարժիչը  
պատերազմն է, վոր յերկու պատերազմող բանակների կա-  
պիտալիստներն ել մղում են թալանի նպատակով: Այդ  
«շարժիչը» անդունդի յեզրին է մոտեցրել մի ամբողջ շարք  
ամենահարուստ, ամենաազատ և ամենալուսավոր ազգերի:  
Նա ժողովուրդներին ստիպում է մինչև վերջին աստիճանը  
լարել բոլոր ուժերը, նա նրանց անտանելի դրութեան մեջ  
է դնում, նա որակարգի մեջ է մտցնում վոր թե վորեւէ  
«թեորիաների» կենսագործումը (այդ մասին խոսք անդամ  
չկա և այդ պարտանքից Մարքսը միշտ նախազգուշացրել է



սոցիալիստներին), այլ ամենածայրահեղ, դործնականապես հնարավոր ձեռնարկումները կիրառումը, վրոճահեռացումը ծայրահեղ ձեռնարկումները՝ կործանում, միլիտան-վոր մարզկանց անհապաղ ու անպայման կործանում է սպառնում սովից:

Վոր առաջավոր դասակարգի հեղափոխական խանդավառությունն այն պայմաններում, յերբ որդեկտիվ դրու-թյունն ամբողջ ժողովրդից պահանջում է ծայրահեղ ձեռ-նարկումներ, շատ քան կարող է անել, այդ ապացուցելու կարիք էլ չկա: Գործի այդ կողմն ակներև կերպով տեսնում է զգում են Ռուսաստանում բոլորը:

Կարևոր է հասկանալ, վոր հեղափոխական ժամանակ-ներում որդեկտիվ սխառացիան նույնքան արագ ու դահա-վիժորեն է փոխվում, ինչպես առհասարակ արագ է հոսում կյանքը: Իսկ մենք պետք է կարողանանք մեր տակտիկան և մեր մերձավորագույն խնդիրները հարմարեցնել յուրա-քանչյուր տվյալ սխառացիայի առանձնահատկությունե-րին: Մինչև 1917 թվականի փետրվարը հերթի յեր դրված հեղափոխական-խնդիրնայնախտական համարձակ պրո-պագանդան, մասսաներին պայքարի կոչ անելը, նրանց դարձեցնելը: Փետրվար-մարտի որերում անձնադուր պայ-քարի հերոսություն եր պահանջվում մերձավորագույն թշնամուն՝ ցարիզմին անհապաղ ջախջախելու համար: Այժմ մենք ապրում ենք մի անցում, վոր հեղափոխություն այդ առաջին ետապից տանում է դեպի յերկրորդը, ցարիզմի հետ «գոտեմարտից» դեպի «գոտեմարտ» դուչկով-միլյու-կովյան, կալվածատիրական ու կապիտալիստական իմպե-րիալիզմի հետ: Որակարգի յե դրված կազմակերպական խնդիրը, սակայն վո՛չ յերբեք լոկ շարուն կազմակերպու-թյունների վրա աշխատելու շարուն իմաստով, այլ կեղեք-ված դասակարգերի չտեսնված լայն մասսաներին կազմա-կերպություն մեղ ներդրավելու և հենց այդ կազմակերպու-թյան միջոցով ռադիկալան, համապետական ու ժողովրդա-տնտեսական խնդիրներն իրագործելու իմաստով:

Այդ յուրորինակ խնդրին պրոլետարիատը մոտեցել է և մոտենալու յե տարբեր ուղիներով: Ռուսաստանի վորոչ վայրերում՝ փետրվար-մարտի հեղափոխությունը նրա ձևըն է տալիս գերթի լրիվ իշխանություն,—ուրիշ վայրե-րում նա, դուցե, «զավթումի» միջոցով կսկսի ստեղծել ու ընդլայնել պրոլետարական միլիցիան,—վորոչ վայրերում ել նա, հավանորեն, կաշխատի գլուխ բերել քաղաքային դումաների և դեմստվոների անհապաղ ընտրություններն ընդհանուր և այլն ընտրական իրավունքի հիմունքներով, դրանցից հեղափոխական կենտրոններ և այլն ստեղծելու համար, մինչև վոր պրոլետարական կազմակերպվածությունն աճումը, զինվորների մերձեցումը բանվորների հետ, շար-ժումը գլուխացրություն մեղ, շատ ու շատ մարզկանց հի-ասթափությունը Գուչկովի ու Միլյուկովի ռադիկալիզմ-երիալիստական կառավարությունն պիտանիություն նկատ-մամբ մոտեցնի այդ կառավարությունը Բանվորների Դե-պուտատների Խորհրդի «կառավարությունով» փոխարինե-լու ժամը:

Չմոռանանք նաև, վոր հենց Պիտերի կողքին մենք ունենք ամենաառաջավոր փաստորեն հանրապետական յեր-կրներից մեկը, Ֆինլանդիան, վորը 1905 թ. մինչև 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական մարտերի պաշտպանություն տակ համեմատաբար խաղաղ կերպով դե-մոկրատիա դարգացրեց և ժողովրդի մեծամասնու-թյունը դրավեց սոցիալիզմի կողմը: Ռուսաստանի պրոլետարիատը կապահովի Ֆինլանդական հանրապետությունը լիակատար ազատություն կիսի մինչև անջատման ազատությունը (այ-ժմ հազիվ թե թեկուզ մի սոցիալ-դեմոկրատ տատանվի այդ հարցում, յերբ կազետ Ռոդերիկովը Հելսինգֆորսում այնպես անվայել ձևով սակարկելով՝ արտոնությունների պատճաններ և պոկում վելիկոուսների համար),—և հենց դրանով ձեռք կբերի Ֆինն բանվորների լիակատար վստա-հությունն ու ընկերական ոգնությունը համառուսական պրոլետարական գործին: Դժվար և մեծ գործում սխալներն



անխուսափելի յեն, դրանից չենք խուսափելու նաև մենք. ֆինն բանվորները լավագույն կազմակերպիչներ են, նրանք մեզ կոչենն այդ բնագավառում, նրանք իրենց ձևով առաջ կմղեն սոցիալիստական հանրապետութեան հիմնումը:

Հեղափոխական հաղթութիւններ բուն Ռուսաստանում, — խաղաղ կազմակերպական հաջողութիւններ ֆինլանդիայում՝ այդ հաղթութիւնների պաշտպանութեան տակ, ուսական բանվորների անցումը հեղափոխական-կազմակերպչական խնդիրներին նոր մասշտաբով, իշխանութեան նւաճում պրոլետարիատի և բնակչութեան ամենաչքավոր խավերի կողմից, սոցիալիստական հեղափոխութեան խրախուսումն ու զարգացումը Արեւմուտքում, — ահա այն ուղին, վորը մեզ հաշտութեան և սոցիալիզմի կհասցնի:

Ն. Լենին

Յյուրիս 11 (24) մարտի 1917 թ.:

Առաջին անգամ տպւած է 1924 թ.

«Ленинский Сборник» II-ում:

ՆԱՄԱԿ ԶՈՐՐՈՐԴ

ԻՆԶՊԵՍ ԶԵՌԻ ԲԵՐԵԼ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Յեւ այս րոպէին միայն (12(25) մարտի) «Յյուրիսյան Նոր Լրագրում» (մարտի 24-ի № 517) կարդացի Բեռլինից հեռագրով հաղորդւած հետեյալ հաղորդագրութիւնը. —

«Շվեդիայից հաղորդում են, վոր Մաքսիմ Գորկին ինչպէս կառավարութեանը, նույնպէս և Գործադիր Կոմիտէին խանդավառութեամբ դրւած մի վողջուն է ուղարկել: Նա վողջունում է ժողովրդի հաղթանակը ռեակցիայի տիրակալների դեմ և Ռուսաստանի բոլոր զաւակներին կոչ է անում ողնել ուսական պետական նոր շենքի կառուցմանը: Միևնույն ժամանակ նա կոչ է անում կառավարութեան իր ազատագրական դործը պտակել հաշտութեան կնքելով: Այդ իբր, չպետք է լինի հաշտութիւն ինչ դնով ել լինի. Ռուսաստանն այժմ ավելի քիչ հիմքեր ունի, քան յերբեկցե, ձգտելու հաշտութեան՝ ինչ դնով ել լինի: Այդ պետք է այնպիսի հաշտութիւն լինի, վորը Ռուսաստանին հնարավորութիւն տա պատվով դոյութիւն ունենալ յերկրի մյուս ժողովուրդների առաջ: Բավական է արդեն, վորքան մարդկութիւնն արդունաբամ յեղավ. նոր կառավարութիւնը մեծագույն ծառայութիւն մատուցած կլինի վո՛չ միայն Ռուսաստանին, այլև ամբողջ մարդկութեանը, յեթե նրան, նոր կառավարութեանը, հաջողվեր արագ կերպով հաշտութիւն կնքել»:

Այսպէս են հաղորդում Մ. Գորկու նամակը:

Դառն դեպքմունքով եւ համակովում, կարդայով այս նամակը, վորը ծայրեծայր տողորւած է քաղքենիական



շրջանն նախապաշարմունքներով: Այս տողերը գրողն առիթ է ունեցել Կապրի կղզում Գորկու հետ տեսակցություններ ունենալի՝ նախազուգացնել նրան և կշտամբել իր քաղաքական գիտելիքի համար: Գորկին այդ կշտամբանքները հետ եք մղում իր անորինակ-գուրեկան ժպիտով և պարզասիրտ հայտարարությամբ՝ «Յես գիտեմ, վոր յես վատ մարքսիստ եմ: Յեմ հետո, մենք բոլորս, գեղարվեստագետներս միքիչ անմեղսագիտակ մարդիկ ենք»: Հեշտ չե՞ դրա դեմ վիճելը:

Կասկած չկա, վոր Գորկին հսկայական գեղարվեստական տաղանդ է, վորը շատ ոգուտ է բերել ու բերելու յե համաշխարհային պրոլետարական շարժմանը:

Բայց ինչո՞ւ յե Գորկին ձեռնամուխ լինում քաղաքականության:

Իմ տեսակետով՝ Գորկու նամակն արտահայտում է վո՛չ միայն մանր բուրժուազիայի, այլև նրա ազդեցության տակ գտնվող բանվորների մի մասի չափազանց տարածված նախապաշարմունքները: Մեր կուսակցության բոլոր ուժերը, գիտակից բանվորների բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն այդ նախապաշարմունքների դեմ մ'վելիք համառ, անհողողղ, բազմակողմանի պայքարին:

Ցարական կառավարությունն սկսել և մղել է տվյալ, ներկա կատերազմը վորպես իմպերիալիստական, թալանչիական, ափաղակային պատերազմ՝ թույլ ժողովուրդներին թալանելու և խեղդելու համար: Գուհկովների և Միլյուկովների կառավարությունը կալվածատիրական ու կապիտալիստական կառավարություն է, վորը հարկադրված է շարունակելու և ուզում է շարունակել հենց նույն այս պատերազմը: Դիմել այդ կառավարությանը դեմոկրատական հաշտություն կնքելու առաջարկությամբ—միևնույն է, թե հասարակաց տներ պահողներին դիմել առաքինության քարոզով:

Բացատրենք մեր միտքը:

Ի՞նչ է իմպերիալիզմը:

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա՝ իմ բրոշյուրում, վորը «Парус» հրատարակչությանն է հասցվել դեռևս մինչև հեղափոխությունը, ընդունվել և նրա կողմից և հայտարարվել «Летопись» ժուռնալում, յես այդ հարցին այսպես եմ պատասխանել:

Իմպերիալիզմը կապիտալիզմն է դարձաճման այն ստադիայում, յերբ առաջ է յեկել մենաշնորհների և ֆինանսական կապիտալի տիրապետությունը, աչքի ընկնող նշանակություն է ստացել կապիտալի արտահանումը, սկսվել է աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից, և ավարտվել է յերկրագնդի ամբողջ տերիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական յերկրներին (VII գլուխը հիշված բրոշյուրի, վորը հայտարարվել է «Летопись»-ի մեջ, յերբ դեռևս գրաքննություն կար, վ. իլյին, «Նորագույն կապիտալիզմը» վերնագրով):

Գործը հանդում է այն բանին, վոր կապիտալն աճել և հսկայական չափերի յե հասել: Փոքրաթիվ խոշորագույն կապիտալիստների միությունները (կարտելներ, սինդիկատներ, տրեստներ) միլիարդների հետ գործ ունեն և իրար միջև բաժանում են ամբողջ աշխարհը: Յերկիրն ամբողջապես բաժանված է: Պատերազմը ծագել է միլիարդատերերի յերկու հզորագույն խմբերի՝ անգլո-ֆրանսական և գերմանական խմբերի ընդհարումից—աշխարհը վերաբաժանելու համար:

Կապիտալիստների անգլո-ֆրանսական խումբն ուզում է առաջին հերթին թալանել Գերմանիային, խլելով նրա գաղութները (գրեթե բոլորն արդեն խլված են), իսկ հետո՝ Թյուրքիային:

Կապիտալիստների գերմանական խումբն ուզում է Թյուրքիան խլել իրեն համար և գաղութները կորցնելու փոխարեն իրեն վարձատրել հարևան մանր պետությունների (Բելգիա, Սերբիա, Ռումինիա) գավթումով:

Ահա իսկական ճշմարտությունը, վորը քողարկված է ամեն ահապի բուրժուական կեղծիքով այն մասին, թե



պատերազմն «ազատագրական» է, «ազգային» է, «խրա-  
վունքի և արդարության պատերազմ է» և այլ նման բո-  
ժոժներով, վերոնցով կապիտալիստները միշտ հիմարա-  
ցնում են պարզամիտ ժողովրդին:

Ռուսաստանը պատերազմն իր փողով չի մղում: Ռու-  
սական կապիտալն անդլո-Ֆրանսական կապիտալի մասնա-  
կիցն է: Ռուսաստանը պատերազմ է մղում Հայաստանը,  
Թյուրքիան, Դալիցիան թալանելու համար:

Գուչկովը, Լվովը, Միլյուկովը, մեր այժմյան մի-  
նիստները, պատահական մարդիկ չեն: Նրանք կալվածատե-  
րերի, կապիտալիստների ամբողջ դասակարգի ներկայացու-  
ցիչներն ու առաջնորդներն են: Նրանք կաշկանդված են կա-  
պիտալի շահերով: Կապիտալիստները չեն կարող հրաժար-  
վել իրենց շահերից, ինչպես մարդ չի կարող իր մազերից  
բռնած իրեն բարձրացնել:

Յերիբորդ, Գուչկով-Միլյուկովը և Ընկ. կաշկանդված  
են անդլո-Ֆրանսական կապիտալով: Նրանք պատերազմը  
մղել են և մղում են ուրիշի փողով: Նրանք պարտք վեր-  
ցրած միլիարդների համար խոստացել են ամեն տարի հա-  
րյուրավոր միլիոն տոկոսներ վճարել, և այդ տուրքը դուրս  
կորդել ռուսական բանվորներից ու ռուսական դյուղացինե-  
րից:

Յերբորդ, Գուչկով-Միլյուկովը և Ընկ. կաշկանդված  
են Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Յապոնիայի և կա-  
պիտալիստ-ավադակների այլ խմբերի հետ այդ պատերազ-  
մի առկապային նպատակների մասին կնքված անմիջական  
պայմանագրերով: Այդ պայմանագրերը դեռ Նիկոլայ II  
ցարն է կնքել: Գուչկով-Միլյուկովը և Ընկ. ողբալիցի  
բանվորներին՝ ցարական միապետության դեմ մղած կռիվից,  
վորպեսզի զավթեն իշխանությունը, իսկ ցարի կնքած պայ-  
մանագրերը նրանք հաստատեցին:

Այդ արեց ամբողջ Գուչկով-Միլյուկովյան կառավարու-  
թյունն իր մանիֆեստում, վորը «Պետերբուրգի հեռագրա-  
կան գործակալությունը» հեռագրով հաղորդեց արտասահ-

ման մարտի 7 (20)-ին «կառավարությունը» (Գուչկովի և  
Միլյուկովի) «հավատարմորեն կպահպանի մեզ մյուս պե-  
տությունների հետ միացնող բոլոր պայմանագրերը»—աս-  
ված է այդ մանիֆեստում: Արտաքին գործերի նոր մինիս-  
տրը Միլյուկովը նույն բանը հայտարարեց Ռուսաստանի  
արտասահմանյան բոլոր ներկայացուցիչներին ուղարկած  
1917 թ. մարտի 5 (18)-ի իր հեռագրում:

Այդ պայմանագրերը բոլորն էլ գաղտնի չեն, և Միլյու-  
կովն ու Ընկ. չեն ուզում դրանք հրապարակել յերկու  
պատճառով. 1) նրանք վախենում են ժողովրդից, վորը չի  
ուզում թալանչիական պատերազմ. 2) նրանք կաշկանդված  
են անդլո-Ֆրանսական կապիտալով, վորը պահանջում է  
պայմանագրերի զաղտնիություն: Բայց թերթ կարդացող  
և գործն ուսումնասիրող ամեն մեկը գիտե, վոր այդ պայ-  
մանագրերում խոսվում է Յապոնիայի կողմից՝ Չինաստա-  
նին, Ռուսաստանի կողմից՝ Պարսկաստանին, Հայաստա-  
նին, Թյուրքիային (մանավանդ Կոստանդնուպոլիսը), Գա-  
լիցիային, Իտալիայի կողմից՝ Ալբանիային, Ֆրանսիայի և  
Անգլիայի կողմից՝ Թյուրքիային և գերմանական զաղութ-  
ները կողոպտելու մասին և այլն:

Այսպես է գործի դրությունը:

Դրա համար էլ Գուչկով-Միլյուկովյան կառավարու-  
թյանը չուտով ազնիվ, դեմոկրատական, բարի-դրացիա-  
կան հաշտություն կնքելու առաջարկով դիմելը նույնն է,  
ինչպես դյուղական բարի «տերտերն» դիմումը կալվածա-  
տերերին ու վաճառականներին, առաջարկելով «աստվածա-  
հաճո կերպով» ապրելու, իր մերձավորին սիրելու և ձախ  
այտին խիսելի աջը դեմ անելու: Կալվածատերերն ու վա-  
ճառականները լսում են քարոզը, շարունակում են ճնշել և  
կողոպտել ժողովրդին ու հրճվում են, թե «տերտերն» ինչ-  
պես լավ է կարողանում մխիթարել ու հանգստացնել «մու-  
ժիկներին»:

Բոլորովին նույն դերն են խաղում—անկախ նրանից,  
նրանք այդ գիտակցում են, թե վոչ,—բոլոր նրանք, ովքեր



ներկա իմպերիալիստական պատերազմի ժամանակ դիմում են բուրժուական կառավարութիւններին բարի ճառերով հաշտութեան մասին: Բուրժուական կառավարութիւնները յերեման բոլորովին հրաժարւում են այդպիսի ճառեր լսելուց և նույնիսկ արգելում են այդ ճառերը, յերեման էլ թույլատրում են արտասանել դրանք, աջ ու ձախ խոստումներ բաժանելով, թե ավար հենց իրենք էլ ամենաշուտափուլի կերպով «ամենարդարացի» հաշտութիւնը կընքելու համար են կոչւում և վոր մեղաւորը միայն իրենց թշնամին: Բուրժուական կառավարութիւններին ուղղված հաշտութեան վերաբերյալ խոսակցութիւնները դործնականում ժողովրդին խաբել և դուրս դալիս:

Հոգերը, չուկաները, կոնցեսիաները բաժանելու համար յերկիրն արշուճով վողողած կապիտալիստների խմբերը չեն կարող «պատմաւոր» հաշտութիւն կնքել: Նրանք կարող են միայն խայտառակ հաշտութիւն, քալամած ավարը բաժանելու, Թյուրքիան և Գաղութները բաժանելու վերաբերյալ հաշտութիւն կնքել:

Իսկ Գուչկով-Միլյուկովյան կառավարութիւնը, բացի դրանից, ընդհանրապես համաձայն չէ հաշտութեան տվյալ մոմենտում, վորովհետեւ այժմ նա «ավարից» «միայն» Հայաստանն ու Գալիցիայի մի մասը կտանար, իսկ նա ուղում և կողոպտել նաև Կոստանդնուպոլիսը ու բացի դրանից դերմանացիներից հետ նվաճել Լեհաստանը, վորին միշտ այնպես սոմարդորեն և անամոթաբար ճնշել և ցարիզմը: Սյնուհետեւ, Գուչկով-Միլյուկովյան կառավարութիւնը ըստ ելութեան լոկ անդր-Փրանսական կապիտալի դործակատարն է, իսկ այդ կապիտալն ուղում է իր ձեռքում պահել Գերմանիայից թալանած գաղութները և բացի դրանից Գերմանիային հարկադրել հետ տալու Բելգիան և Յրանսիայի մի մասը: Անդր-Փրանսական կապիտալն ողնում էր Գուչկովներին ու Միլյուկովներին պաշտոնանկ անելու Նիկոլայ II-ին, վորպեսզի նրանք իրեն ոգնեն Գերմանիային «հաղթելու»:

Ռերեմն ի՞նչ անել:

Հաշտութիւն ձեռք բերելու համար (և առաջել ևս իսկապես գեմոկրատական, իսկապես պատմաւոր հաշտութիւն ձեռք բերելու համար) հարկաւոր է, վորպեսզի պետութեան մեջ իշխանութիւնը պատկանի վո՛չ թե կալվածատերերին ու կապիտալիստներին, այլ բանվորներին և ամենաչփաւոր գյուղացիներին: Կալվածատերերն ու կապիտալիստները—ընակչութեան չնչին փոքրամասնութիւնն են: Կապիտալիստներն, ինչպես ամենքին հայտնի յն, չտեսնւմ զուգարներ են չահում պատերազմից:

Բանվորներն ու ամենաչփաւոր գյուղացիները բնակչութեան ախազին մեծամասնութիւնն են: Նրանք պատերազմից չեն չահվում, այլ քայքայվում են և սովի յն մատուցվում: Նրանք կաշկանդված չեն վո՛չ կապիտալով, վո՛չ էլ կապիտալիստների ավաղակային խմբերի միջև կնքված պայմանագրերով: Նրանք կարող են և անկեղծորեն ուղում են պատերազմը դադարեցնել:

Յեթե Ռուսաստանում պետական իշխանութիւնը պատկաներ Բանվորների, Չինվորների և Գյուղացիների Դեպուտատների խորհուրդներին, այդ Խորհուրդները և նրանց ընտրած Համառուսական խորհուրդը կկարողանային և անշուշտ կհամաձայնեյին իրադրծելու հաշտութեան այն ծրագիրը, վորը մեր կուսակցութիւնը (Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցութիւնը) նշել է դեռ 1915 թ. հոկտեմբերի 13-ին, այդ կուսակցութեան կենտրոնական որդան «Социал-Демократ»-ի (վորն այն ժամանակ, ցարական դրաքնութեան ճնշման պատճառով, ժընկում էր հրատարակվում) № 47-ում:

Հաշտութեան այդ ծրագիրը, հալանորեն, հետեյալը կլիներ.—

1) Բանվորների, Չինվորների և Գյուղացիների Դեպուտատների Համառուսական Խորհուրդը (կամ Ժամանակավորապես նրան փոխարինող Պետերբուրգի Խորհուրդը) իսկույնէթ կազդարարեր, վոր ինքը կաշկանդված չէ վո՛չ



ցարական միապետութեան, վն'չ եւ բուրժուական կառավարութեաններէ վարուեալներէ վարուեալներէ:

2) Նա անմիջապէս կհրապարակէր այդ բոլոր պայմադրերը, վերապահի հասարակական անարգանքի մատներ ցարական միապետութեան եւ առանց բացառութեան բոլոր բուրժուական կառավարութեաններէ ամպագային նպատակները:

3) Նա անհապաղ եւ բացահայտորեն կառաջարկէր բոլոր պատերազմող պետութիւններին իսկույն ևեք զինադադար կնքել:

4) Նա անհապաղ կհրապարակէր ի տեղեկութիւն համայն ժողովուրդի հաշտութեան մեր, բանվորական եւ գյուղացիական, հետեյալ պայմանները. —

բոլոր զաւուրներէ ազատագրում,

բոլոր կախյալ, ճնշված եւ թերիրալ ժողովուրդներէ ազատագրում:

5) Նա կհայտարարէր, վոր բուրժուական կառավարութեաններէ լավ բան չի սպասում, այլ առաջարկում եւ բոլոր յերկրներէ բանվորներին՝ տապալել նրանց եւ պետութեան մեջ ամբողջ իշխանութիւնը հանձնել բանվորներէ Դեպուտատներէ Խորհուրդներին:

6) Նա կհայտարարէր, վոր այդ վոճրագործ, ամպակային պատերազմը մղելու համար բուրժուական կառավարութեաններէ կնքած միլիարդներէ պարտքերը կարող են վճարել իրենք պարունայք կապիտալիստները, իսկ բանվորներն ու գյուղացիներն այդ պարտքերը չեն ընդունում: Այդ փոխառութեաններէ համար տոկոսներ վճարել նշանակում եւ յերկար տարիներ կապիտալիստներին տուրք վճարել այն բանի համար, վոր նրանք վոճորմածարար թույլատրեցին բանվորներին իրար կոտորել կապիտալիստական ամպար բաժանելու համար:

Բանվորներ'ր եւ գյուղացիներ', — կասէր Բանվորներէ Դեպուտատներէ Խորհուրդը, — արդյոք դուք համաձայն եք ամեն տարի պարոնայք կապիտալիստներին հարյուրա-

վոր միլիոններ վճարել, վորպէս պարզեալն պատերազմի համար, վորը մղվել եւ աֆրիկական զաւուրներէ, Թյուրքիայի բաժանման համար եւ այլն:

Ահա հաշտութեան այս պայմաններէ համար Բանվորներէ Դեպուտատներէ Խորհուրդը, իմ կարծիքով, կհամաձայնէր պատերազմ մղել ամեն մի բուրժուական կառավարութեան դեմ եւ աշխարհիս բոլոր բուրժուական կառավարութեաններէ դեմ, վորովհետեւ այդ իսկապէս արդարացի պատերազմ կլինէր, վորովհետեւ բոլոր յերկրներէ բոլոր բանվորներն ու աշխատավորները կոգնեցին դրա հաջողութեանը:

Գերմանական բանվորն այժմ տեսնում եւ, վոր Ռուսաստանում ռազմատենչ միապետութեանը փոխարինում եւ ռազմատենչ հանրապետութեանը, իմպերիալիստական պատերազմը շարունակել ցանկացող ցարական միապետութեան ամպակային պայմանագրերը հաստատող կապիտալիստներէ հանրապետութեանը:

Ինքներդ դատեցեք, կարո՞ղ եւ արդյոք գերմանական բանվորը վատահել այդպիսի հանրապետութեանը:

Ինքներդ դատեցեք, կգիմանա՞ արդյոք պատերազմը, կգիմանա՞ արդյոք յերկրիս վրա կապիտալիստներէ տիրապետութեանը, յեթե ուստի ժողովուրդը, վորին ոգնել եւ ոգնում են «հինգ թվականի» մեծ հեղափոխութեան կենդանի հիշողութեանները, լիակատար ազատութիւն նվաճել ամբողջ պետական իշխանութեանը Բանվորներէ եւ Գյուղացիներէ Դեպուտատներէ Խորհուրդներէ ձեռքը հանձնի:

Ն. Լենին

Յուլիի, 12 (25) մարտի 1917 թ.

Առաջին անգամ տպված եւ 1924 թ.

«Ленинский Сборник» II-ում:



ՀԵՂԱՓՈՆԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախքան խոսել նամակներում հեղափոխական պրոլետարիատի խնդիրները Ռուսաստանում տվյալ դժգոհություն հետևյալ կերպ ուղղադժվեցին. (1) կարողանալ ամենախտահելի ճանապարհով մոտենալ հեղափոխության հետևյալ երեսին. կամ յերկրորդ հեղափոխությանը, վերջ (2) պետք է պետական իշխանությունը կալվածատերերի և կապիտալիստների (Գուլակների, Լվովների, Միլյուկովների, Կերենսկիների) կառավարության ձեռքից հանձնի բանվորների և ամենաչքածվոր գյուղացիների կառավարության ձեռքը: (3) Այս միջոցին կառավարությունը պետք է կազմակերպվի Բանվորների և գյուղացիների Դեպուտատների Խորհուրդների տիպով, այն է (4) նա պետք է ջարդի, բոլորովին վերացնի հին և բոլոր բուրժուական պետություններում սովորական պետական մեքենան, բանակը, վոստիկանությունը, բյուրոկրատիան (չինովնիկությունը), այդ մեքենան փոխարինելով (5) զինված ժողովրդի վրձ միայն մասնաշաղկան, այլ և անխտիր ընդհանուր կազմակերպությունը: (6) Միայն այդպիսի կառավարությունը, «այդպիսին» ըստ իր դասակարգային կազմի («պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա») և իր կառավարման որդաններով («պրոլետարական միլիցիա») ի վիճակի յե հաջող լուծելու մոմենտի չափազանց դժվար և անպայման-անհետաձգելի, ամենագլխավոր խնդիրը, այն է՝ ձեռք բերել հաշտություն, այն էլ վրձ թե իմպերիալիստական հաշտություն, վրձ թե պործարք իմպերիալիստական

տերություններ միջև՝ կապիտալիստների և իրենց կառավարությունների թալանած աղարը բաժանելու շուրջը, այլ իսկապես հաստատուն և դեմոկրատական հաշտություն, վրձն անհասանելի յե առանց պրոլետարական հեղափոխության մի շարք յերկրներում: (7) Ռուսաստանում պրոլետարիատի հաղթությունը ամենամոտ ապագայում իրադրծելի յե միայն այն պայմանով, վրձ այդ հաղթության առաջին քայլը կլինի գյուղացիության հսկայական մեծամասնության աջակցությունը բանվորներին այն կովում, վրձ պրոլետարիատը մղում է ամբողջ կալվածատիրական հողատիրությունը բռնադրավելու համար (և ամբողջ հողի աղքատացման համար, յեթե ընդունենք, վրձ «104»-ի հողային ծրագիրն ըստ իր ելույթյան մնացել է վորպես գյուղացիության հողային ծրագիր): (8) Այդպիսի գյուղացիական հեղափոխության կազակցությամբ և դրա հիման վրա հնարավոր և անհրաժեշտ են պրոլետարիատի հետագա քայլերը, գյուղացիության ամենաչքավոր մասի հետ դաշնակցած, քայլեր, վրձնց նպատակն է կարեւորագույն միջոցների բարագործության և բաշխման վերահսկողությունը, «ընդհանուր աշխատադահակի» կիրառումը և այլն: Այդ քայլերն անպայման անխուսափելիությունը բղխում են այն պայմաններից, վրձ ստեղծել և պատերազմը և վրձնք շատ տեսակետներից նույնիսկ սրելու յե հետպատերազմյան ժամանակը. իսկ իրենց ամբողջ դուժարով և իրենց դարդացմամբ այդ քայլերը կլինեյին անցում դեպի սոցիալիզմը, վրձն անմիջականորեն, միանգամից, առանց անցումային ձեռնարկումների անխրադրծելի յե Ռուսաստանում, բայց այդ տեսակի անցումային ձեռնարկումների հետանքով լիովին իրադրծելի յե ու կենսապես անհրաժեշտ: (9) Գյուղերում անհապաղ ու առանձին Բանվորների Դեպուտատների Խորհուրդներ, այսինքն՝ մնացած գյուղացիական դեպուտատների Խորհուրդներից առանձին՝ գյուղատնտեսական, վարձու բանվորների խորհուրդներ կազմակերպելու խնդիրն այս դեպքում ծայրահեղ հրամայականությունը է առաջադրվում:



Այս և համառոտակի մեր ուրվագծած ծրագիրը, հիմնված ռուսական և համաշխարհային հեղափոխութեան դասակարգային ուժերի հաշվառման, ինչպես նաև 1871 և 1905 թ. թ. փորձի վրա:

Այժմ փորձենք մի ընդհանուր հայացք դրել այդ ծրագրի վրա իր ամբողջութեամբ, դուզենթացաբար կանդ առնելով այն բանի վրա, թե ինչպես է մոտեցել այդ թեմային Կ. Կառլցկին, «2-րդ» (1889—1914) ինտերնացիոնալի խոշորագույն թեորետիկը և բոլոր յերկրներում նկատվող՝ սոցիալ շովինիստների ու հեղափոխական ինտերնացիոնալիստների միջև տատանվող «կենտրոնի», «ճահճի» հոսանքի ամենաականավոր ներկայացուցիչը: Կառլցկին մոտեցել է այդ թեմային իր՝ «Նոր ժամանակ» («Die Neue Zeit», 1917 թ. նոր տոմարով ասրիլի 6-ի №-ը) ժուռնալում, «Ռուսական հեղափոխութեան հեռանկարները» հոդվածում:

«Ամենից առաջ,—գրում է Կառլցկին,—մենք պետք է պարզենք մեզ համար հեղափոխական պրոլետարական ուժի մի (պետական կառուցվածքի) առաջ կանգնած խնդիրները»:

«Յերկու բան,—չարունակում է հեղինակը,—հրամայաբար անհրաժեշտ են պրոլետարիատին՝ դեմոկրատիա և սոցիալիզմ»:

Միանգամայն թանկեղի այս դրույթը Կառլցկին, դժբախտաբար, չափազանց ընդհանուր ձևով է առաջադրում, այնպես վոր այդ եյապես, վոչինչ չի տալիս և վոչինչ չի պարզում: Միլյուկովն ու Կերենսկին, բուրժուական ու իմպերիալիստական կառավարութեան այդ անդամները, հաճույքով կատրագրեյին այդ ընդհանուր դրույթի տակ, մեկը դրա առաջին, մյուսը—յերկրորդ մասի տակ<sup>1</sup>...

Գրված է 1917 թ. ապրիլի 8 (մարտի 26)–ին:

Առաջին անգամ տպված է 1924 թ.

«Ленинский Сборник» II-ում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՃ

|                                                        |    |
|--------------------------------------------------------|----|
| Նամակ առաջին                                           |    |
| Առաջին հեղափոխութեան առաջին էտապը . . . . .            | 3  |
| Նամակ յերկրորդ                                         |    |
| Նոր կառավարութեանը և պրոլետարիատը . . . . .            | 17 |
| Նամակ յերրորդ                                          |    |
| Պրոլետարական միլիցիայի մասին . . . . .                 | 33 |
| Նամակ չորրորդ                                          |    |
| Ինչպե՞ս ձևաք բերել հաշտութեան . . . . .                | 51 |
| Նամակ հինգերորդ                                        |    |
| Հեղափոխական պրոլետարական պետական կառուցվածքի խնդիրները | 60 |

<sup>1</sup> Այստեղ ձևադիրն ընդհատվում է: Խմբ.:





Մ. չեղարկանքի խմբագրական հանդուրժումը  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Մրցադրիչ Ս. Մանուկյան  
Կոնսուլ սրբազրիչ Յե. Տ.-Մինասյան

---

Չլավիլի լիազոր ն. 1970. հրատ. № 772  
Պատվեր № 2, տիրաժ 6000  
Հանձնվել է արտադրության 30/XII 1939 թ.  
Ստորագրվել է տպագրելու 24/I 1940 թ.  
Դինը 50 է.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Յերևան Ալլահվերդյան № 65

«Ազգային գրադարան»



NL0174689



ԳԻՆԸ 50 Կ.

В. И. ЛЕНИН  
ПИСЬМА ИЗ ДАЛЕКА

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940